

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
2022 ԹՎԱԿԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## **Սիրելի՛ գործընկերներ և ուսանողներ,**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2022 թվականի հաշվետվությունը ներկայացվում է որպես փաստական հավաստում այն իրողության, որ մեր բուհն իր գործունեության առանցքային ուղղություններով՝ մրցունակ մասնագետների պատրաստում, կրթական ծրագրերի բարելավում, համալսարան-գործադու կապի խորացում, հետազոտական աշխատանքներ, միջազգայնացում, ընդունելություն, ֆինանսական կայունության ապահովում և այլն, շարունակում է իր բարձր և հաստատուն դիրքը պահպանել ՀՀ բարձրագույն կրթության համակարգում: Այդուհանդերձ, այս հանգամանքը չի խոչընդոտում, որ վերլուծենք նաև խնդիրները, իրատեսորեն գնահատենք առկա մարտահրավերները:

Այսպիսով, 2022 թ., ընդհանուր առմամբ, հարուստ էր ձեռքբերումներով, որոնք համահունչ են բուհի որդեգրած առաքելությանը, գործունեության առաջնահերթություններին: Մասնագիտական կրթական ծրագրերի որակի բարելավումը՝ որպես ակադեմիական գործընթացի ռազմավարական նպատակ և համակարգված գործողություններ, արդյունավետ ընթացք ապահովեց, զուգահեռաբար վերապատրաստվեց, որակավորվեց և համարվեց ակադեմիական կազմը: Բուհ-աշխատաշուկա գործակցության արդյունքը ևս, ինչպես մյուս առանցքային ուղղությունները, միաված է մեր հիմնական շահառուին՝ ուսանողին, վերջինիս գործնական գիտելիքի ձևավորմանը, փորձառությանը, աշխատանքի տեղավորմանը, երջանիկ ու ապահով ապագայի կերտմանը:

Բուհի գիտական խորհրդի կողմից հաշվետու տարում հաստատվել և կիրառություն են ստացել համալսարանի գործունեության արդյունավետության բարձրացմանը միտված մի շարք կարգեր: Ուրախությամբ պետք է նշել, որ մեր ռազմավարական նպատակների իրագործման գլխավոր թիրախային ուղղությունները՝ միջազգային գործընկերություն, դրամաշնորհային ծրագրեր, վարկանշավորում, շարժունության ծրագրեր, էլեկտրոնային կառավարում, ենթակառուցվածքների զարգացում, օտարերկրյա դիմորդների ուսուցում և այլն, շարունակական ձեռքբերումների պատկեր են ձևավորում և թույլ են տալիս կանխատեսել բարձրագույն կրթության առաջիկա մարտահրավերները, դրանց ընդառաջ գնալ ավելի վստահ և գործնական քայլերով: Մեր նպատակը գիտակրթական բարենպաստ միջավայր ձևավորելն է, նորաստեղծական գաղափարներ իրագործելը, հետևաբար, մեր համախմբված աշխատանքի թափանցիկությունը կարևոր է, հանգամանալից վերլուծությունը՝ անհրաժեշտ և օգտակար:

Սույն հաշվետվության մեջ տեղ է գտել 2022 թ. ՀՊՏՀ ուսումնագիտական, միջազգայնացման և տնտեսական աշխատանքների, իրականացված ծրագրերի ամփոփ վերլուծությունը, վեր են հանվել բուհի առջև ծառայած խնդիրները: Հավելվածների բաժնում արտացոլվել են բուհի գործունեության բոլոր ոլորտների թվային տվյալները:

Հարգանքով՝

**ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ**  
ՀՊՏՀ ռեկտոր

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<b>ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ I</b> .....	<b>5</b>
Կրթական ծրագրերի որակի բարելավում Կրթական ծրագրեր Ակադեմիական կազմ Ուսանողներ Ուսանողների փորձառություն Ուսանողական նախագծեր Շրջանավարտներ Դիմորդներ Ենթակառուցվածքներ	
<b>ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ II</b> .....	<b>16</b>
ՀՊՏՀ գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացում Կանոնակարգեր Կարճ կուրսեր Ֆոնդահայթայթում Էլեկտրոնային կառավարում ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ	
<b>ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ III</b> .....	<b>21</b>
Կիրառական հետազոտություններ–կրթություն ինտեգրման և կիրառական հետազոտություններ–տնտեսություն համագործակցության ապահովում	
<b>ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ IV</b> .....	<b>25</b>
Միջազգայնացման ընդլայնում Միջազգային գործընկերություն Շարժունության ծրագրեր Միջոցառումներ Միջազգային դրամաշնորհային ծրագրեր Վարկանշավորում Օտարերկրյա դիմորդներ	
<b>ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ V</b> .....	<b>31</b>
Ակադեմիական էթիկայի և սոցիալական պատասխանատվության սկզբունքների ներդրում	
<b>ԽՆԴԻՐՆԵՐ</b> .....	<b>34</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ</b> .....	<b>37</b>



ՀՄՏԿ  
ՔՈՆՍՏԱՆԻՍՏԱՆԻ  
ԱՏՄԷ  
ARMENIAN STATE  
UNIVERSITY OF  
ECONOMICS  
SPECIALIZATION • EXPERIENCE • OPPORTUNITY

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՔՈՆՍՏԱՆԻՍՏԱՆԻ  
ՔՈՆՍՏԱՆԻՍՏԱՆԻ  
ԱՏՄԷ

ARMENIAN STATE  
UNIVERSITY OF  
ECONOMICS

SPECIALIZATION • EXPERIENCE • OPPORTUNITY

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ I

### Կրթական ծրագրերի որակի բարելավում

Ըստ ՀՊՏՀ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Կրթական ծրագրերի որակի բարելավում» ռազմավարական նպատակի՝ 2022 թ. համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- կիրառական գիտելիք տվող դասավանդման մեթոդների ներդրում կրթական ծրագրի առանձին մոդուլների առնվազն 50%-ում,
- լսարանային ֆոնդի առնվազն 40%-ի վերազինում պրոյեկտորներով,
- Moodle համակարգով կրթության կազմակերպման և ուսումնառությանը նպաստող մեթոդական բազայի (էլեկտրոնային մեթոդական նյութեր, տեսադասախոսություններ, քեյսեր և այլն) ձևավորում՝ գործող ՄԿԾ-ներում ներառված դասընթացների առնվազն 100%-ի համար,
- Moodle համակարգով հեռավար կրթության կազմակերպման և ուսումնառությանը նպաստող մեթոդական բազայի (էլեկտրոնային մեթոդական նյութեր, տեսադասախոսություններ, քեյսեր և այլն) ձևավորում՝ բոլոր գործող ՄԿԾ-ների համար:

#### Կրթական ծրագրեր

«Կրթական ծրագրերի որակի բարելավում» ռազմավարական նպատակին համահունչ՝ համալսարանում, 2021 թվականից սկսած, իրականացվում է կրթական ծրագրերի վերանայում՝ «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ և վերջինիս համաֆինանսավորմամբ: Այսպես, նախորդ տարի հիմնովին վերանայվել են «Ֆինանսներ» և «Տնտեսագիտություն» մասնագիտությունների բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերը, և ՀՀ կենտրոնական բանկի «ՏԿՀԱԿ» հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակում հուլիսի 5-8-ը, ՀՀ ԿԲ անձնակազմի անդամների ներգրավմամբ, համալսարանի տնտեսագիտության տեսության, միկրոէկոնոմիկայի, մակրոէկոնոմիկայի, տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնների շուրջ 30 դասախոս անցել է մասնագիտական վերապատրաստում և ատեստավորում:

Հաշվի առնելով նախորդ տարվա հաջողված փորձը՝ «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի հետ նոր պայմանագիր է կնքվել 3 բակալավրական՝ «Վիճակագրություն», «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա», «Տեղեկատվական համակարգեր» և 2 մագիստրոսական՝

«Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն», «Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում» կրթական ծրագրերի վերանայման և արդիականացման ուղղությամբ, ինչպես նաև «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մագիստրոսական կրթական ծրագրի մշակման համար: Ստեղծված փորձագիտական խումբն աշխատանքներն սկսել է 24.10.2022-ից և ավարտին կհասցնի 6 ամսվա ընթացքում:

2022 թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատմանն են ներկայացվել «Բիզնես վարչարարություն» մասնագիտության՝ 4 տարի տևողությամբ բակալավրական և 1.5 տարի տևողությամբ մագիստրոսական անգլիալեզու կրթական ծրագրերը: Ծրագրերը լիցենզավորվել են և 2022-2023 ուստարում իրականացվել է օտարերկրյա դիմորդների ընդունելություն:

ՀՊՏՀ-ում հաշվետու տարում լիցենզավորվել է նաև «Գործարար վարչարարություն» կրկնակի աստիճանաշնորհման մագիստրոսական կրթական ծրագիրը՝ Բրեստի բիզնես դպրոցի (Ֆրանսիա) հետ համատեղ: «Գործարար վարչարարություն» մագիստրոսական ծրագրի տևողությունը 1,5 տարի է, որի ավարտին ուսանողներն ստանում են ՀՊՏՀ ավարտական վկայական և Ֆրանսիայի ինստիտուցիոնալ վկայական՝ Բրեստի բիզնես դպրոցից: Ծրագիրն ընդգրկում է 90 կրեդիտ (45-ը շնորհվում է ՀՊՏՀ-ի կողմից, 45-ը՝ Բրեստի բիզնես դպրոցի), ուսուցումը մոդուլային կարգով է, իսկ դասընթացներն իրականացվելու են հայ և միջազգային դասախոսների կողմից՝ ՀՊՏՀ-ում:

2022-2023 ուսումնական տարում կայացել են բոլոր 11 բակալավրական ծրագրերը, իսկ մագիստրոսական 24 ծրագրից՝ 21-ը: 2022-2023 ուսումնական տարում ՀՊՏՀ (այդ թվում ՀՊՏՀ ԳՄ և ՀՊՏՀ քոլեջ) է ընդունվել 2565 ուսանող, որից 1809-ը՝ բակալավրիատ (այդ թվում 118 ուսանող քոլեջից-բուհ 2-րդ կուրս հեռակա ուսուցմամբ), 320-ը՝ մագիստրատուրա, 25-ը՝ հետբուհական կրթության համակարգ, իսկ 411-ը՝ ՀՊՏՀ քոլեջ: Ընդ որում, բակալավրիատ ընդունված ուսանողների թիվը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 4.7%-ով:

### **Ակադեմիական կազմ**

ՀՊՏՀ-ն շարունակում է ուշադրության կենտրոնում պահել ակադեմիական կազմի վերապատրաստման խնդիրները: Այսպես, 2022 թ. Շարունակական կրթության բաժինը կազմակերպել է ակադեմիական և ուսումնաօժանդակ կազմերի տարաբնույթ վերապատրաստումներ, մասնավորապես՝ համալսարանի ութ ամբիոնների 70 դասախոսներ անցել են մասնագիտական վերապատրաստումներ և ատեստավորվել: Այս գործընթացում ներգրավվել են ոլորտային լավագույն մասնագետները, համապատասխան պետական կառույցների աշխատակիցներ և դասընթացավարներ:

Միջազգային գիտական շտեմարաններում ՀՊՏՀ աշխատակիցների անձնական էջերի առաջնդման, գիտական արդի հետազոտությունների կառուցվածքի, մեթոդաբանության և գործիքակազմի ներկայացման և նոր պահանջներին համապատասխան գիտական հետազոտությունների խրախուսման նպատակով 2022 թ. համալսարանի հիմնական կազմի 26 անդամի համար կազմակերպվել է գիտական հետազոտությունների մեթոդաբանության գծով 30 ժամ ընդհանուր ժամաքանակով վերապատրաստում:

Հաշվետու տարում կազմակերպվել է նաև դասավանդման մեթոդաբանության գծով երկու վերապատրաստում՝ 50 դասախոսի մասնակցությամբ: Վերապատրաստման նպատակն էր դասավանդման արդի մեթոդների ներկայացումը, ուսանողակենտրոն ուսուցման պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպումը և ուսումնառության ինտերակտիվության ապահովումը:

Այս ուղղությամբ արժեքավոր ձեռքբերումներից է նաև ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի և Չեխիայի CERGE-EI-ի կազմակերպության միջև համագործակցությունը, ինչի արդյունքում մասնաճյուղի ակադեմիական կազմը հնարավորություն է ունեցել մասնակցելու մի շարք մասնագիտական դասընթացների և վերապատրաստումների:

Շարունակվել են նաև գործարար անգլերենի վերապատրաստման դասընթացները: Մասնավորապես, 2022 թ. հունվարի 10-ին մեկնարկած վերապատրաստմանը մասնակցել է 67 աշխատակից, որից 19-ը նախորդ տարվա մասնակիցներ էին, որոնք ցանկացել են կատարելագործել անգլերենի իմացությունը: Ձևավորվել է 6 խումբ, որից 1-ը՝ Advanced (12 մասնակից), 2-ը՝ UpperIntermediate (20 մասնակից), 1-ը՝ Intermediate (15 մասնակից), 2-ը՝ Preintermediate (20 մասնակից): 2022 թ. նոյեմբերի 1-ին ձևավորվել է գործարար անգլերենի ուսուցման և վերապատրաստման 5 խումբ, որին մասնակցում է ավելի քան 50 աշխատակից:

Հաշվետու ժամանակահատվածում վերապատրաստվել է համալսարանի ուսումնաօժանդակ կազմի 72 աշխատակից՝ մասնակցելով MS Excel-ի դասընթացներին: Վերապատրաստման հիմնական շահառուներն էին դեկանատների, ամբիոնների, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցները:

Ընթացիկ տարում ամփոփվել են նաև 2021-2022 ուսումնական տարվա երկու կիսամյակի ուսանողական անանուն հարցումների արդյունքները: Հարցումներին մասնակցել է ուսանողության շուրջ 46%-ը. ինչպես ՀՊՏՀ ակադեմիական կազմից, այնպես էլ դասավանդման որակից ուսանողների գոհունակության գնահատումը 4 բալային սանդղակով կազմել է 3,52 միավոր: 2020 թ. այդ ցուցանիշը 3,64 միավոր էր, 2019 թ.՝ 3,46, իսկ 2017 թ.՝ 3,39:

2021-2022 թթ. հարցումները որոշակիորեն համադրելի չեն նախորդ տարիների հարցումների հետ, քանի որ դրանք իրականացվել են նոր հարցաշարերով, որոնցում

ներառվել են բոլորովին նոր հարցեր՝ կապված Համալսարանին հետաքրքրող առանցքային ուղղությունների վերաբերյալ տեղեկատվության ապահովման հետ (Moodle հարթակի ձևավորում, վերբեռնված նյութերի որակ, գնահատման օբյեկտիվություն, գնահատման սկզբունքի մատչելիություն և այլն): Այնուամենայնիվ, պետք է նշել, որ տրամադրված ուսումնական նյութերից ուսանողների բավարարվածությունը, նախորդ տարվա նկատմամբ, մնացել է անփոփոխ (3,55), դասավանդման կիրառված մեթոդներից ուսանողների գոհունակության ցուցանիշը նվազել է 0,12 միավորով (3%-ով), իսկ դասախոսի ընդհանրացված գնահատականը նվազել է 0,26 միավորով (7%-ով): Հարցման բոլոր բաղադրիչների ընդհանրական միջին գնահատականը, նախորդ տարվա համեմատ, նվազել է 3%-ով: Ուսանողական հարցման արդյունքներով՝ ամենամեծ առաջընթացն ապահովել է համալսարանի բանկային գործի և ապահովագրության ամբիոնը, ամենամեծ անկումը գրանցել են միկրոէկոնոմիկայի և տնտեսական ինֆորմատիկայի ու տեղեկատվական համակարգերի (8-11%) ամբիոնները: Նկատելի անկում են արձանագրել նաև տնտեսամաթեմատիկական մոդելավորման, հասարակագիտության, կառավարման և բիզնես վարչարարության ամբիոնները (4-5%):

### ***Ուսանողներ***

Բուհ-աշխատաշուկա կապի ամրապնդումն ընթացիկ տարում եղել է ՀՊՏՀ առաջնահերթություններից մեկը: Այսպես, 2022 թ. Կարիերայի կենտրոնը կարևորել է գործընկերների հետ հարաբերությունների ամրապնդումը, բուհում գործատուների ներգրավվածության և ներկայացվածության ավելացումը, ուսանողների և շրջանավարտների սահուն անցումը բուհից աշխատաշուկա: Այս նպատակներին հասնելու համար իրականացվել են մի շարք նախագծեր և միջոցառումներ: Մասնավորապես.

- գործընկեր կազմակերպությունների հետ կնքվել են ավելի քան 20 համագործակցության հուշագրեր և փորձառության կազմակերպման պայմանագրեր: Բացի դրանից, մի շարք կազմակերպությունների հետ համագործակցության պայմանավորվածություններ են ձեռք բերվել առանց պայմանագրային հենքի:

- Կարիերայի կենտրոնի ֆեյսբուքյան էջում տեղադրվել է գործընկեր կազմակերպությունների ավելի քան 360 թափուր հաստիքի համալրման հայտարարություն, ինչպես նաև ՀՊՏՀ ուսանողների և շրջանավարտների տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային հասցեներին է ուղարկվել ավելի քան 540 թափուր հաստիքի համալրման հայտարարություն: Համաձայն իրականացված մշտադիտարկման՝ թափուր հաստիքների համար դիմողների շուրջ 64%-ը ՀՊՏՀ շրջանավարտներն են, իսկ 36%-ը՝ ուսանողները:



- Կազմակերպվել է 20-ից ավելի վարպետության դաս՝ հայաստանյան առաջատար կազմակերպություններում ղեկավար ու ներկայացուցչական պաշտոններ զբաղեցնող բանախոսների մասնակցությամբ: Դասախոսությամբ հանդես է եկել ՀՀ Նախագահը, վարպետության դասեր են անցկացրել «ռեԱրմենիա» ընկերության, «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի, «Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» ՀԿ-ի, GG, «Դիջիթեյն», «Ինգո Արմենիա», PwC Armenia ընկերությունների ներկայացուցիչները և այլ գործընկերներ: Ընթացիկ տարում կազմակերպված վարպետության դասերին մասնակցել է շուրջ 1400 ուսանող:

- ՀՊՏՀ-ն ընթացիկ տարում դարձել է նաև «STARMUS VI. 50 տարի Մարսի վրա» խորագիրը կրող Starmus VI Armenia հեղինակավոր փառատոնի պաշտոնական գործընկերը, որի շրջանակներում համալսարանում բանախոսությամբ հանդես են եկել Միջազգային տիեզերական համալսարանի ռեկտոր Ժան-Ժակ Դորդենը և iPod-ի ու iPhone-ի համաստեղծողն է և Nest Labs-ի հիմնադիր ու նախկին գործադիր տնօրեն Թոնի Ֆադելը: Համալսարանը նաև ձեռք է բերել փառատոնի 200 տոմս՝ ՀՊՏՀ ուսանողներին, շրջանավարտներին ու աշխատակիցներին հնարավորություն տալով մասնակցելու փառատոնի միջոցառումներին:

- ՀՊՏՀ բակում պարբերաբար կազմակերպվել են գործատուների օրեր («Ինտերբանկ», Evolution Armenia, Teach For Armenia, «Դիջիթեյն» ընկերություններ և այլն), երբ գործընկեր կազմակերպությունները ներկայացրել են իրենց թափուր հաստիքներն ու համալրման հնարավորությունները: Բացի դրանից, պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ՀՊՏՀ ուսանողների և շրջանավարտների հետ, որոնց ընթացքում գործընկեր կազմակերպությունները ներկայացրել են իրենց աշխատանքի և փորձառության ծրագրերը (ՀՀ կենտրոնական բանկի Տաղանդների ներգրավման ծրագիր, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Արի՛ մաքսային ծառայություն» ծրագիր, Ամերիաբանկի «Դարձի՛ր սպասարկման ոլորտի ամենապահանջված մասնագետներից մեկը» ծրագիր, Արդշինբանկի «Դարձի՛ր բանկիր» և «Ամբասադոր» ծրագրեր, Evolution Armenia, Teach For Armenia, «Դիջիթեյն» ընկերությունների ծրագրեր և այլն):

- Գործընկերների հետ համատեղ ՀՊՏՀ ուսանողների համար իրականացվել են մի շարք դրամաշնորհային ծրագրեր և մրցույթներ («Ինգո Արմենիա» ՓԲԸ, «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ, «Ստամինա» վաճառքի աութօրսինգային ընկերություն և այլն): Ինչպես նաև, բացի կրթական ծրագրերով հաստատված փորձառություններից, ուսանողների գործնական գիտելիքների ամրապնդման նպատակով կազմակերպվել են փորձառության մի շարք մրցույթներ, որոնց մասնակցել է 44 ուսանող:

- Փափուկ հմտությունների (soft skills) զարգացման նպատակով Կարիերայի կենտրոնն ընթացիկ տարում մշակել և իրականացրել է «Ինչպես մրցունակ լինել աշխատանքի շուկայում» վարպետության դասը, որի առաջին փուլի մասնակից 165 ուսա-

նողների շրջանում անցկացվել է նաև հարցում՝ դասընթացի օգտակարությունը գնահատելու համար: Արդյունքում մասնակիցների 97.9%-ը վարպետության դասի բովանդակությունը գնահատել է 5 միավոր (5 առավելագույնից): Հարցվողների 100%-ը դասընթացավարի կողմից նյութի մատուցման մատչելիությունը գնահատել է 5 միավոր (5 առավելագույնից), իսկ վարպետության դասի ընթացքում ստացած գիտելիքները 5 միավոր (5 առավելագույնից) է գնահատել հարցվողների 98%-ը:

- ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում իրականացվող «Հայկական գործոն» կամ «Վերջում՝ ...յան» ծրագրի շրջանակներում մասնաճյուղի կրթական գործընթացում ներգրավվել են աշխարհի հեղինակավոր համալսարաններում դասավանդող հայազգի մասնագետներ: Վերջիններիս կողմից հեռավար դասընթացների արդյունավետ կազմակերպման նպատակով մասնաճյուղը ժամանակակից տեխնիկական միջոցներով կահավորել է մեկ լսարան: Ծրագրի ներդրման արդյունքում կազմակերպվել են շուրջ 130 ֆորմալ և ոչ ֆորմալ հեռավար և 5 մոդուլային դասընթացներ, որոնք հաջողությամբ հաղթահարած մասնակիցների մի մասը հնարավորություն է ստացել ներգրավվելու ՀՀ ԿԲ հետազոտական կենտրոնի տարբեր վարչությունների հետ համատեղ իրականացվող հետազոտական ծրագրերում:

### ***Ուսանողների փորձառություն***

Ուսումնական ծրագրերով հաստատված ուսումնաարտադրական, գիտահետազոտական, հետազոտական և գիտամանկավարժական փորձառություններ են կազմակերպվել բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսանողների համար: Ընդհանուր առմամբ, ընթացիկ տարվա հունվար ամսից սկսած, 402 կազմակերպությունում փորձառության է մասնակցել 1161 ուսանող: Փորձառության մասնակիցների շուրջ 72.3%-ը բակալավրիատի առկա և հեռակա կրթաձևերի ուսանող է: Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները փորձառության վայրի ընտրության հարցում նախապատվությունը տալիս են բանկային համակարգի ընկերություններին և պետական հաստատություններին: Այս առումով, ընթացիկ ժամանակահատվածում հետաքրքրություն են ներկայացրել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն (68 ուսանող), «Հայրիզնես-բանկ» ՓԲԸ-ն (56 ուսանող), «Արդշինբանկ» ՓԲԸ-ն (40 ուսանող), «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն (31 ուսանող), «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն (15 ուսանող) և այլն:

Պետական հատվածում ուսանողները փորձառություն են անցել ՀՀ ֆինանսների նախարարությունում (61 ուսանող), ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում (53 ուսանող), ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում (47 ուսանող), ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեում (41 ուսանող), ՀՀ կենտրոնական բանկում (16 ուսանող) և այլն:

Կարիերայի կենտրոնի կողմից անցկացվել են կրթական ծրագրերով նախատեսված փորձառության արդյունքների վերաբերյալ հարցումներ, որոնց ամփոփ հաշվետվությունը ցույց է տալիս, որ ուսանողների 50%-ը փորձառության վայր ուղղորդվել է ՀՊՏՀ-ի կողմից, 30%-ի փորձառության վայրը համընկել է իրենց ընթացիկ աշխատավայրի հետ, իսկ 20%-ի պարագայում ուսանողներն են փորձառության վայրի վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերել: 13.6%-ը փորձառություն անցել է ՀՊՏՀ գործընկերների կողմից կազմակերպված մրցութային փուլի հաղթահարման արդյունքում: Փորձառության գնահատման հարցաթերթում ուսանողների հիմնական մասը նշել է, որ արդյունքում ձեռք է բերել գործնական հմտություններ և ստացել է մասնագիտական խորհրդատվություն: Ուսանողների զգալի մասն արձանագրել է, որ, որպես այդպիսին, ընդգծված խնդիրներ չի նկատել, իսկ բարձրաձայնված խնդիրները հիմնականում առնչվել են ուսանողների մասնագիտական կարողությունների և հետաքրքրությունների անհամատեղելիությանը, փորձառության ղեկավարի ոչ բավարար մասնակցությանը և այլն: Միաժամանակ, հարցման արդյունքում պարզվել է, որ ավելի քան 70 ուսանող փորձառության վայրում ստացել է աշխատանքի առաջարկ:

Հաշվետու տարում, ըստ Կարիերայի կենտրոնի կողմից փորձառությունների կազմակերպման փուլում հավաքագրված նախնական տեղեկությունների, բակալավրիատի ուսանողների 54.5%-ը, իսկ մագիստրատուրայի ուսանողների 90.7%-ն արդեն ապահովված էր աշխատանքով:

### ***Ուսանողական նախագծեր***

2022 թ. Change Lab-ը շարունակել է ուսանողների ձեռնարկատիրական և գործնական հմտությունների շարունակական զարգացմանն ուղղված միջոցառումները: Մասնավորապես, Upgrade Armenia-ի հետ համատեղ կազմակերպվել է «Ի՞նչ գրաֆիկ դիզայն» անվճար դասընթացը, որը բաղկացած էր 2 փուլից՝ տեսական դասերից և workshop-երից, որոնց ընթացքում մասնակիցները հնարավորություն են ունեցել կիրառելու ստացած գիտելիքները: Դասընթացի հիմնական նպատակն էր ուսանողներին փոխանցել հմտություններ, որոնք գործնականում կկիրառվեն դիզայնական խմբերին ճիշտ հրահանգավորելու համար: Արդյունքում մասնակիցները բազային գիտելիք են ձեռք բերել դիզայնի տեխնիկական հիմունքների, տեսակների՝ փաթեթավորման, լոգոյի, նույնականացման, UI/UX դիզայն գործընթացների և բրենդինգի բաղադրիչների վերաբերյալ: Դասընթացին մասնակցության ցանկություն էր հայտնել 160 ուսանող ՀՊՏՀ-ից և ՀՀ այլ բուհերից, նախնական փուլը հաղթահարել էր 67 հոգի, իսկ հաջողությամբ ավարտած 29 ուսանող ստացել էր վկայագիր:

Սոցիալական ձեռներեցների դպրոցի հետ համատեղ իրականացվել է «Սոցիալական և ավանդական ձեռներեցություն» թեմայով դասընթացը, որը նպատակ ուներ ուսանողներին ծանոթացնելու ձեռներեցության մոդելներին, գործիքակազմերին,

առաքելությանը, զարգացնելու ձեռնարկատիրական մտածողություն ու կարողություններ: Դասընթացին մասնակցել է ավելի քան 80 ուսանող:

ChangeLab-ի ուսանողական թիմն այս տարի ևս մասնակցել է CaseKey բիզնես խնդիրների լուծման միջազգային մրցույթին: ChangeLab-ի թիմում ընդգրկված են եղել 9 ուսանող և 2 մենթոր: Մրցույթի ընթացքում թիմն անցել է արտասահմանյան և հայաստանյան մասնագետների հնգամսյա դասընթաց, ինչպես նաև, մինչև վերջնական խնդիր ստանալը, լուծել է 4 միկրոխնդիր:

2022 թ. հոկտեմբերի 25-ին մեկնարկել է Շարունակական կրթության բաժնի, Change Lab-ի և UpGrade Armenia-ի կողմից համատեղ կազմակերպված «SMM ցատկ. Facebook և Instagram» երկամսյա դասընթացը, որի մասնակիցները 12-ն են՝ 7-ը՝ ՀՊՏՀ ուսանող, 1-ը՝ շրջանավարտ:

Համալսարանի Շարունակական կրթության բաժինը «Դը Գուրուս» ընկերության հետ համագործակցության արդյունքում 2022 թ. կազմակերպել է Sas Base-ի 5 դասընթաց՝ անվճար հիմունքներով ներգրավելով համալսարանի ավելի քան 40 ուսանողի:

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում հունական Innovation Hive-ի հետ համատեղ կազմակերպված դասընթացների շահառու են դարձել մասնաճյուղի մեծ թվով ուսանողներ: Մասնավորապես, Innovation Impulse բիզնես դասընթացների շարքին մասնակցել է 29, իսկ Ulearn տնտեսական դասընթացներին՝ 33 ուսանող: Մեկ այլ ուսանողական նախաձեռնություն է մասնաճյուղի «Ինովացիոն ՀԱԲ» ծրագիրը, որի նպատակն է տարածաշրջանում երիտասարդական ներուժի զարգացման հարթակի ստեղծումը՝ նորարարությունը և սոցիալական ձեռներեցությունը զարգացնող բարենպաստ էկոհամակարգով:

### **Շրջանավարտներ**

Հաշվետու տարվա ընթացքում համալրվել է աշխատանք փնտրող ՀՊՏՀ շրջանավարտների տեղեկատվական շտեմարանը, որում այս պահին առկա է ավելի քան 8000 շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվություն: Բացի դրանից, համալրվել են նաև աշխատանք փնտրող և կամավորական աշխատանքով հետաքրքրվող ուսանողների տեղեկատվական շտեմարանները:

Ամենշաբաթյա պարբերականությամբ տեղեկատվական շտեմարաններում առկա էլեկտրոնային հասցեներին ուղարկվում է թափուր հաստիքների, մրցույթների, միջազգային ծրագրերի, փորձառության հնարավորությունների մասին տեղեկատվություն: Միաժամանակ, Կարիերայի կենտրոնը նաև անհատական ու խմբային խորհրդատվություններ է իրականացնում աշխատանք փնտրելու հմտությունների՝ մրցունակ CV կազմելու, հարցազրույցներին նախապատրաստվելու վերաբերյալ:

ՀՊՏՀ Կարիերայի կենտրոնը հուլիսի 8-ին կազմակերպել է նաև հանդիսավոր միջոցառում, որի ընթացքում շրջանավարտներին հանձնվել են ավարտական վկայականներ: ՀՀ Նախագահը, ՀՀ ԿԳՄՍ նախարարը և ՀՊՏՀ ռեկտորը դիպլոմներ են հանձնել և հավաստագրերով ու ՀՊՏՀ գործընկեր կազմակերպությունների նվերներով (պլանշետ և էյրփոդ) են պարգևատրել ՀՊՏՀ վեց ֆակուլտետների և ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի լավագույն շրջանավարտներին, ևս վեց շրջանավարտի հանձնվել է «Դեկանի համակրանք» մրցանակը: Բացի դրանից, ՀՊՏՀ մյուս գործընկերների կողմից շուրջ 200 փոքրիկ հուշանվերներ են հանձնվել Կարմիր դիպլոմ ստացող, ինչպես նաև վիճակահանությամբ՝ այլ շրջանավարտների:

### **Դիմորդներ**

2022 թ. համալսարանի Շարունակական կրթության բաժինն իրականացրել է բազմաթիվ նախագծեր և դիմորդների ներգրավման միջոցառումներ: Մասնավորապես, ՀՀ մարզերի ավագ դպրոցների 12-րդ դասարանի շուրջ 80 աշակերտ համալսարանում մասնակցել է «Շրջակա միջավայրի պաշտպանություն, թե՛ տնտեսական զարգացում» և «Ազգային տնտեսությունը և գլոբալացումը. ինչպե՞ս քաղել օգուտներ» թեմաներով տնտեսագիտական էսսեի հանրապետական մրցույթին: ՀՊՏՀ ակադեմիական կազմի հինգ անդամից բաղկացած հանձնաժողովը գնահատելիս առաջնորդվել է հետևյալ չափորոշիչներով՝ շարադրանքի համապատասխանություն թեմային, ստեղծագործական միտք, մոտիվացիա, տրամաբանական փաստարկում և լեզվական գրագիտություն: 2022 թ. ապրիլի 1-ին կայացած մրցանակաբաշխությանը 3 աշակերտ արժանացել է 100 000 ՀՀ դրամ կրթաթոշակի՝ ՀՊՏՀ ընդունվելու դեպքում, իսկ 12 մասնակից՝ ստացել խրախուսական նվեր: Մրցույթի մասնակիցների մեծամասնությունը համալրել է ՀՊՏՀ առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ուսանողների շարքերը:

2022 թ. հուլիսին համալսարանում կազմակերպվել է ավագ դպրոցների 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտների համար նախատեսված ASUE Summer School-2022 ամառային դպրոցը: Մասնակցության համար հայտագրված 125 աշակերտներից (տարբեր մարզերից) մրցութային կարգով ընտրվել է 42-ը: Իսկ հոկտեմբերին անցկացվել է ավագ դպրոցների 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների համար նախատեսված ASUE Autumn Camp-2022 աշնանային ճամբարը, որին մասնակցության հայտ է ներկայացրել շուրջ 150 աշակերտ, ընտրվել՝ 40-ը: Ճամբարներին բանախոսություններով հանդես են եկել ՀՊՏՀ դասախոսներ և աշխատակիցներ, ինչպես նաև հրավիրյալ խոսնակներ ՀՀ կենտրոնական բանկից, ՀՀ ֆինանսների նախարարությունից, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ընկերությունից: Կազմակերպվել են ինտերակտիվ խաղեր և թիմային առաջադրանքներ: Լավագույն բիզնես նախագիծ ներկայացրած թիմերն արժանացել են մրցանակների:

Ընթացիկ տարում ՀՊՏՀ-ում կազմակերպվել է «Բաց դռների օր» ճանաչողական 5 միջոցառում և «Արի՛ ՀՊՏՀ» մարզային այցելությունների շարք: Միջոցառումներին մասնակցել է ավելի քան 1500 աշակերտ՝ հնարավորություն ստանալով ծանոթանալու բակալավրական կրթական ծրագրերի ընդունելության կարգին, ուսանողական նախագծերին, միջազգային փոխանակման ծրագրերին:

Դիմորդների ներգրավման և համալսարանի կրթական ծրագրերը շահառուներին ներկայացնելու նպատակով բաժինը մասնակցել է «Դիմորդից՝ ուսանող» համաժողովին, «Կրթություն և կարիերա էքսպո-2022»-ի «Կրթություն և կարիերա» ցուցահանդեսին:

Դիմորդների ներգրավման քաղաքականության շրջանակներում բաժինն ակտիվորեն աշխատել է սոցիալական մեդիա հարթակներում համապատասխան տեղեկության զետեղման, բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի նոր ձևաչափով ներկայացման, «ՀՊՏՀ դիմորդ» ֆեյսբուքյան խմբի, Շարունակական կրթության բաժնի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի առաջնդման, դիմորդների հարցադրումներին պատշաճ արձագանքման և տեղեկության տրամադրման, նրանց հետ անմիջական կապի ապահովման ուղղությամբ, ինչպես նաև կազմակերպվել է հանդիպում դիմորդների ծնողների հետ:

Դիմորդների հետ ակտիվ աշխատանք է տարվել նաև ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում. օրինակ՝ InnovArm ծրագրի նպատակն է եղել ստեղծել նորարար մտածողության դպրոց: Նախագիծն իրականացվում է «Փոլիսինեթ» գիտահետազոտական կենտրոնի հետ համատեղ: Ծրագրին մասնակցել է տարբեր դպրոցների 19 աշակերտ: Մինևույն ժամանակ, աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստող «1 օր ՀՊՏՀ ԳՄ»-ում նախագծի շրջանակում 2022 թ. կազմակերպվել են փոխադարձ այցեր Շիրակի մարզի 23 դպրոցներ և 75 դասարաններ:

2022 թվականի ապրիլի 28-ին իրականացվել է նաև գործընկեր-դպրոցների պարզևատրման արարողություն, որին մասնակցել են այն ավագ դպրոցների տնօրենները, որոնց ղեկավարած հաստատությունների հետ վերջին երեք տարիներին ձևավորվել է արդյունավետ փոխգործակցություն: Դպրոցների տնօրենների հետ հանդիպմանը կազմակերպվել է քննարկում, որի նպատակն էր ավագ դպրոց-համալսարան համագործակցության հեռանկարների ընդլայնումը: Արդյունքում, ՀՊՏՀ-ում կազմակերպվել է նաև ավագ դպրոցներում և քոլեջներում «Տնտեսագիտություն» դասավանդող 29 ուսուցիչների աշխատաժողով-վերապատրաստում, որի շրջանակում ներկայացվել են դասավանդման ժամանակակից մեթոդական մոտեցումներ, տնտեսագիտության, ֆինանսաբանկային, ձեռնարկատիրական ոլորտներում գիտելիքների արդյունավետ փոխանցման արդի մեթոդներ և գործիքներ:

### **Ենթակառուցվածքներ**

Հաշվետու ժամանակաշրջանում էապես բարելավվել են բուհի և ՀՊՏՀ քոլեջի ենթակառուցվածքները: Մասնավորապես, վերանորոգվել է 1291.5 մ<sup>2</sup> տարածք, որից ՀՊՏՀ քոլեջում հիմնովին վերանորոգվել և կահավորվել է 9 լսարան: Ձեռք են բերվել 56 նոր համակարգիչներ և 25 անուն այլ համակարգչային տեխնիկա: Ընթերցասրահի նստատեղերի 100%-ը հագեցվել է համացանցային հասանելիությամբ, ՀՊՏՀ գրադարանը համալրվել է 1895 անուն նոր գրականությամբ, թվայնացվել է 52 գիրք և ապահովվել է 15 միջազգային էլեկտրոնային հարթակների հասանելիություն:

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական անձնակազմի արտալսարանային աշխատանքն արդյունավետ կազմակերպելու համար ստեղծվել է արդիականացված և հարմարավետ ամբիոն:

2022 թ. ՀՊՏՀ ԳՄ-ում ստեղծվել է նաև վարչական աշխատակիցների՝ աշխատանքային տարածքից դուրս փոքր ընդմիջումների, առանձին հանդիպումների, շփումների առանձնացված միջավայր՝ Punishment free zone-ը, որտեղ աշխատակիցն ազատվում է աշխատանքային նկատողությունից (պատժից), իհարկե, պայմանով, որ չպետք է ունենա տվյալ պահի դրությամբ չկատարված հանձնարարություններ: Մասնաճյուղը շարունակում է նաև տեխնիկապես հագեցնել լսարանները՝ դրանք համապատասխանեցնելով տարբեր ձևաչափով աշխատանքների կազմակերպմանը: Այս ուղղությամբ, շարունակական ներդրումների արդյունքում, մասնաճյուղի լսարանների ավելի քան 53%-ն ապահովվել է տեխնիկական անհրաժեշտ միջոցներով:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ II

### ՀՊՏՀ գործունեության արդյունավետության

### մակարդակի բարձրացում

Զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «ՀՊՏՀ գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացում» ռազմավարական նպատակին համահունչ և որակյալ կադրերի ներգրավման նպատակով 2022 թ. ՀՊՏՀ-ում հայտարարվել է ակադեմիական կազմի համալրման մրցույթ՝ 7 ամբիոնի 14 թափուր հաստիքների համար: Մրցույթին մասնակցելու նպատակով դիմել է 14 հավակնորդ, փակ գաղտնի քվեարկության արդյունքում ընտրվել է 13-ը, իսկ 1 հաստիք մնացել է թափուր: Թափուր հաստիքների մրցույթ է հայտարարվել նաև ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջում՝ 20 մասնագիտությունների գծով: Մրցույթի արդյունքներով ընտրվել է 39 հիմնական և 12 համատեղության կարգով դասավանդող դասախոս:

#### Կառավարում

Հաշվետու տարում ՀՊՏՀ գիտական խորհրդի հաստատմամբ կիրառության մեջ են դրվել համալսարանի գործունեության արդյունավետության բարձրացմանը միտված մի շարք կարգեր, որոնցից են՝ «Ակադեմիական կազմի տարեկան գործունեության գնահատման և վարկանշավորման» կարգը, [«ՀՊՏՀ սկսնակ դասախոսների մենթորության կազմակերպման»](#) կարգը, [«ՀՊՏՀ ՊՈԱԿ կրթական ծրագրերով հաստատված ուսանողների փորձառության կազմակերպման, անցկացման և ամփոփման»](#) կարգը, [«Դասընթացի իրականացման գնահատման նպատակով ուսանողական հարցման անցկացման ընթացակարգը»](#), [«Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական գեկույցում նշված թերությունների վերացման ՀՊՏՀ ծրագիրը»:](#)

ՀՊՏՀ ռեկտորի կողմից հաստատվել են նաև ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջի գործունեության կարգավորմանն ուղղված կարգերը՝ [«ՀՊՏՀ ՊՈԱԿ ֆինանսատնտեսագիտական քոլեջի ներքին կարգապահական կանոնները»](#), [«ՀՊՏՀ ՊՈԱԿ ֆինանսատնտեսագիտական քոլեջում ուսումնառության և ստուգման կարգը»](#), [«ՀՊՏՀ ՊՈԱԿ ֆինանսատնտեսագիտական քոլեջում ուսանողական նպաստ հատկացնելու, ուսման վարձը փոխհատուցելու և կրթաթոշակ տրամադրելու կարգը»:](#)

Նախորդ տարի ավարտին են հասցվել աշխատակիցների և ակադեմիական կազմի պաշտոնների նոր անձնագրերի մշակման և հաստատման, ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատման և գործառույթների հստակեցման գործընթացները: Ընթացիկ տարում, գիտխորհրդի հաստատմամբ, վերանայվել են ուսումնական պլաններում տարբեր դասընթացների ժամաբաշխման և ակադեմիական խմբերի ձևավորման նորմատիվները: Արդյունքում, թեև 2022-2023 ուս տարում ավելացել է



ուսանողների և ակադեմիական խմբերի քանակը, այնուամենայնիվ նոր նորմատիվների կիրառման հետևանքով հնարավոր է դարձել կրճատել 5300 ժամ:

Ուսանողների թվաքանակի ավելացման և արդյունավետ ժամաքաշխման արդյունքում՝ խնայողությունների հաշվին, 2022թ. սեպտեմբեր ամսին բարձրացվել և դիֆերենցվել է ակադեմիական կազմի աշխատավարձը՝ ստեղծելով գիտությամբ զբաղվելու խթաններ: Բարձրացվել է նաև ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջի դասախոսների աշխատավարձը՝ 26%-ով:

### **Կարճ կուրսեր**

ՀՊՏՀ բյուջեի մուտքերի բազմազանեցման և կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով 2022 թ. Շարունակական կրթության բաժինը կազմակերպել է վճարովի դասընթացներ, որոնց մասնակցել են ինչպես ՀՊՏՀ ուսանողները, շրջանավարտները, աշխատակիցները, այնպես էլ՝ այլ շահառուներ: Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 7 դասընթաց.

- Ազգային բժշկական պալատի հետ համատեղ կազմակերպվել են շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) կրեդիտներ շնորհող «Հոսպիտալ մենեջմենթ-6» և «Հոսպիտալ մենեջմենթ-7» դասընթացները (34 մասնակից, այդ թվում՝ ՀՀ առողջապահական հաստատությունների տնօրեններ և ղեկավար անձնակազմի անդամներ):
- Ֆինանսների ամբիոնի կողմից կազմակերպվել է «Ֆինանսական կառավարում» դասընթացը՝ 20 ժամ ընդհանուր ժամաքանակով, մասնակցել է 6 անձ, որից 5-ը՝ ՀՊՏՀ ուսանող:
- «Սպառողների վարքագծային մոդելները. նեյրոմարքեթինգը բիզնեսում» թեմայով երկօրյա դասընթացն անցկացրել է վարքագծային մարքեթինգի փորձագետ, «Նեյրոհար» ընկերության հիմնադիր Ա. Կյուրեղյանը: Մասնակցել է 8 անձ, որից 2-ը՝ ՀՊՏՀ աշխատակից, 2-ը՝ ՀՊՏՀ ուսանող, 1-ը՝ ՀՊՏՀ շրջանավարտ:
- ONE Academy-ի հետ համատեղ կազմակերպվել է «1C Հաշվապահություն» դասընթացը, որը ներկայացնում էր 1C ֆրանչայզի և հավաստագրված ուսումնական կենտրոն հանդիսացող OneSoft ընկերությունը: 5 շաբաթ տևողությամբ դասընթացը նախատեսված էր 1C հաշվապահություն սովորել ցանկացող անձանց համար: Դասընթացին մասնակցել է 8 անձ, որից 6-ը՝ ՀՊՏՀ ուսանող, 1-ը՝ ՀՊՏՀ շրջանավարտ:
- «Մեքենայական ուսուցում՝ Python ծրագրավորման լեզվի կիրառմամբ» դասընթացը 6 շաբաթ տևողությամբ էր: Դասընթացին մասնակցել է 18 անձ, որից 8-ը՝ ՀՊՏՀ աշխատակից, 3-ը՝ ՀՊՏՀ ուսանող և 1-ը՝ ՀՊՏՀ շրջանավարտ:
- «Գործընթացների կառավարում» կարճաժամկետ դասընթացի 5 մասնակիցներից 1-ը ՀՊՏՀ ուսանող էր:

## **Ֆոնդահայթայթում**

2022 թ. ընթացքում Ֆոնդահայթայթման բաժինը շարունակել է արտաքին ֆինանսական աղբյուրների բացահայտումը և դրամաշնորհային մրցույթների մշտադիտարկումը, ինչպես նաև ակադեմիական և վարչական անձնակազմի հետ համատեղ տեղական և միջազգային դրամաշնորհային մրցույթների համար առաջարկների մշակումը:

Այսպես, հաշվետու տարում ՀՊՏՀ-ն դարձել է ՀՀ ԲՏԱ նախարարության «Գաղափարից մինչև բիզնես» նորարարական բաղադրիչով դրամաշնորհային ծրագրի շահառու: Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել է աքսելերացիոն նախագիծ (համակարգող՝ Գ. Ամիրխանյան), որի նպատակն էր սկսնակ բիզնեսի ներկայացուցիչներին փոխանցել անհրաժեշտ գիտելիքներ և գործնական հմտություններ՝ բիզնեսը զարգացնելու համար: Ծրագրի շահառուներն էին 6 ստարտափներ՝ «Զլինկ» «Ռոբոդել» «Դուդուկ» «Մանոթ» «Թեքս ընդ փեյ մի» «Գաբբի»: Ծրագրի շրջանակում իրականացվել է մասնակիցների կարիքների գնահատում, որի հիման վրա էլ կազմակերպվել են դասընթացներ՝ «Մտավոր սեփականության պաշտպանության խնդիրները ստարտափներում», «Ֆինանսներ ստարտափների համար» «Ստարտափների ֆինանսավորման փուլերն ու ներդրումային գործիքները» «Ֆոնդահայթայթում ստարտափների համար», «Թվային մարքեթինգ ստարտափների համար», «Բրենդինգ», «Ռազմավարական բիզնես մտածողություն ստարտափների և ձեռներեցների համար», «Պրեզենտացիոն հմտություններ», «Նախագծերի կառավարում» թեմաներով՝ ոլորտի լավագույն մասնագետների մասնակցությամբ: Ծրագրի ընթացքում շարունակաբար տրամադրվել է խորհրդատվություն, առաջխաղացման տեսահոլովակներ են նկարահանվել մասնակիցների բիզնես արտադրանքի վերաբերյալ, ստարտափների հետ ազատ ձևաչափով անցկացվել են հարցազրույցներ և հանրայնացվել: Աքսելերացիոն ծրագիրն ամփոփվել է հավաստագրերի հանձնման արարողությամբ:

Հաշվետու տարում ՀՊՏՀ-ն դարձել է նաև «Ընդլայնել հնարավորությունները հետազոտական համագործակցության համար (Widening opportunities for research collaborations)» ծրագրի շահառու, որը ֆինանսավորվում է Շվեդական ինստիտուտի կողմից, և բյուջեն կազմում է 100.211 եվրո: Ծրագրի գործընկերներն են Լինկոպինգի համալսարանը (Շվեդիա), Կոմրատի պետական համալսարանը (Մոլդովա), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (Հայաստան): Ծրագրի նպատակը հետազոտությունների միջազգայնացման բարելավման և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ կարգավորման և գործառնական շրջանակի ստեղծումն է:

Կրթության և հետազոտության ամերիկյան կենտրոնի VFA ծրագրի շրջանակում, որի նպատակն է ուկրաինացի մասնագետի ներգրավմամբ Հայաստանի տնտեսության թվայնացման թեմայով հայ-ուկրաինական համատեղ հետազոտության իրականացումը, ՀՊՏՀ-ն հյուրընկալելու է ուկրաինացի գործընկեր Վ. Գրոսուլին: Ծրագրի բյուջեն 6,600 ԱՄՆ դոլար է:

2022 թ. ՀՊՏՀ-ն դարձել է նաև «Էրազմուս+»-ի կողմից բուհերի կարողությունների զարգացման ծրագրի շրջանակում իրականացվող T-Green նախագծի շահառու: Նախագծի նպատակն է Հայաստանում կրթության բարեփոխումը՝ Փարիզյան համաձայնագրի և Եվրոպական կանաչ գործարքի սկզբունքներին համապատասխան: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 995,000 եվրո:

### **Էլեկտրոնային կառավարում**

2022-2023 ուսումնական տարում 281 ակադեմիական խմբերի համար moodle հարթակում ձևավորվել են 2123 ուսումնական մոդուլներ՝ ըստ ՀՊՏՀ-ի կողմից հաստատված դասացուցակների: Դրանցից 1346-ը ձևավորվել է առկա, 522-ը՝ հեռակա բակալավրիատի, 220-ը՝ առկա, 35-ը՝ հեռակա մագիստրատուրայի ակադեմիական խմբերի համար:

Համակարգում ներգրավված են առկա և հեռակա կրթաձևերի բոլոր կրթական ծրագրերի ակադեմիական խմբերի ուսանողներն ու դասավանդողները: Ընդհանուր առմամբ, moodle հարթակում մուտքի հնարավորություն է ապահովված համալսարանի 7602 նույնականացված օգտատիրոջ համար (որից՝ առկա և հեռակա բակալավրիատի 5637 ուսանող, առկա և հեռակա մագիստրատուրայի 724 ուսանող, 86 ասպիրանտ, ակադեմիական և վարչական անձնակազմի 468 ներկայացուցիչ, Գյումրու մասնաճյուղի 584 ուսանող և 103 ակադեմիական ու վարչական անձնակազմի ներկայացուցիչ): 2022 թ. նոյեմբերի 30-ի դրությամբ moodle հարթակում առկա 2123 դասընթացի մոդուլից 2100-ը (ընդհանուրի 99%-ը) ամբողջությամբ համապատասխանել է համալսարանի սահմանած պահանջներին՝ ինչպես ձևավորման դիզայնի ու բովանդակության, այնպես էլ վերբեռնված ուսումնառության նյութերի առումով: Փաստացի, moodle հարթակում ձևավորված դասընթացների 97%-ը ապահովված է օտար լեզվով ուսումնառության համար անհրաժեշտ ժամանակակից (ոչ ավելի, քան 3 տարվա հրատարակություն), ինչպես նաև դասընթացի կրեդիտից բխող ինքնուրույն ուսումնառության համար՝ հայերեն նյութերով: 2022 թ. հունվար-նոյեմբերին ընդհանուր մուտքերի թիվը moodle հարթակ կազմել է 3,816,390:

Moodle հարթակում շարունակվել է 2021 թվականից գործարկված ընտրովի դասընթացների, փորձառության վայրերի և ավարտական աշխատանքների ու մագիստրո-

սական թեզերի ընտրության առանձնացված մոդուլների (թվայնացված ռեգիստրարների), ինչպես նաև դասընթացից և դասավանդողների որակից ուսանողների բավարարվածության անանուն հարցման մոդուլների բնականոն կիրառումը:

2022-2023 ուսումնական տարում ՀՊՏՀ-ն լիարժեք կերպով կազմակերպել է ակադեմիական խմբերի ձևավորման, ամբիոնների ուսումնական ծավալների հաշվառման, դասաբաշխման, դասացուցակների կազմման, ուսանողների հաճախումների և ակտիվության հաշվառման, քննական տեղեկագրերի ստացման գործընթացներն էլեկտրոնային դեկանատի՝ ums.asue.am համակարգի միջոցով: Սոս համակարգում ներկայում ներառված են համալսարանի 6945 ուսանողի (որից՝ առկա բակալավրի կրթական ծրագրով՝ 3515, հեռակա բակալավրի կրթական ծրագրով՝ 2122, առկա մագիստրոսի կրթական ծրագրով՝ 589 և հեռակա մագիստրոսի կրթական ծրագրով՝ 135, Գյումրու մասնաճյուղի ուսանողներ՝ 584) ամբողջական տվյալներ: Սոս համակարգում դասացուցակների մոդուլի ձևավորումից հետո առաջացած 281 ակադեմիական խմբերի համար ավտոմատացված կերպով ստեղծվել են 2123 էլեկտրոնային մատյաններ և դրանց փոխկապակցված՝ քննական ամփոփաթեթեր (որոնցից՝ առկա ուսուցմամբ բակալավրիատում՝ 1346, հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ 522, առկա ուսուցմամբ մագիստրատուրայում՝ 220 և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայում՝ 35 թվայնացված մատյան և ամփոփաթեթ): Սոս համակարգում գրանցված է ՀՊՏՀ և ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ակադեմիական կազմի և ուսումնաօժանդակ ու վարչական կազմերի 571 ներկայացուցիչ: Համակարգը հնարավորություն է ընձեռում վարելու և գեներացնելու ուսումնական գործընթացին, ուսանողների ուսումնառության արդյունքներին, հաճախումներին, ամփոփիչ ատեստավորմանը, միջին որակական գնահատականին (փաստացի, կիսամյակային, տարեկան և կուտակային), շարժունությանն առնչվող 31 առանձնացված վիճակագրական հաշվետվություններ, ինչը էապես դյուրացրել է իրական ժամանակի ռեժիմում համալսարանի կողմից կրթական գործընթացի վիճակագրության վարման և փաստերի վրա հիմնված որոշումների կայացման աշխատանքները:

### **ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ**

ՀՊՏՀ ԳՄ-ն մշակել և ներդրել է կառավարման «7 Մ»-երի մոդելը և դրա հենասյուններին համապատասխանեցրել բուհի կառավարման տրամաբանությունը: 2022 թվականից մասնաճյուղն անցել է ծրագրային կառավարման: Առաջնորդվելով մասնաճյուղի ռազմավարական ծրագրի հիման վրա մշակված տրամաբանական կառուցվածքով և «7 Մ»-երի մոդելով՝ մշակվել են դրանց ներդրմանը և զարգացմանը նպաստող շուրջ 40 ծրագրեր, որոնցից 29 արդեն գործարկվել է:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ III

### **Կիրառական հետազոտություններ–կրթություն ինտեգրման**

### **և կիրառական հետազոտություններ–տնտեսություն**

### **համագործակցության ապահովում**

Հաշվետու տարում համալսարանում շարունակվել է գիտության և կիրառական հետազոտական գործունեության զարգացմանն ուղղված հետևողական քայլերի իրականացումը: Մասնավորապես, գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2022 թ. գործունեության ծրագիրը», որի շրջանակներում կենտրոնը, ըստ արտաքին և ներքին շահառուների առաջարկությունների, դրամաշնորհային հիմունքով իրականացրել են 10 հետազոտական ծրագրեր: Հետազոտությունների թեմատիկ ընտրությունը կատարվել է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պատվերով՝ հաշվի առնելով համապատասխան ոլորտների պետական քաղաքականության առաջնահերթություններն ու գերակայությունները: Կենտրոնը 2022 թ. իրականացրել է 9 հետազոտական ծրագրեր՝ հետևյալ գերատեսչությունների հետ համատեղ.

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
- Երևանի քաղաքապետարան

Նշված հետազոտական ծրագրերին մասնակցել են 25 ուսանող և ասպիրանտ: Ներքին շահառուների մասնակցությամբ (ամբիոններ, մասնաճյուղեր) «Ամբերդ» կենտրոնն իրականացրել է 1 հետազոտական ծրագիր, որում ներգրավված են եղել 3 ուսանող և ասպիրանտ:

Հաշվետու ժամանակաշրջանում «Ամբերդ» հետազոտական կենտրոնը, որպես համակատարող, ընդգրկված է եղել ՌԴ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի կողմից համակարգվող ԵՏՀ «Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների՝ գործող միջազգային պայմանագրերում

պարունակող՝ 2014 թ. մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի Հոդված 102-ի համաձայն միասնականացման մասին որոշումների կայացում պահանջող նորմերի որոշում և համեմատական վերլուծության իրականացում. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների միջազգային առևտրային պայմանագրերի միասնականացման իրականացման կարգի մասին առաջարկությունների և այդպիսի միասնականացման տնտեսական հետևանքների հիմնավորումների մշակում, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության միասնական շուկայի գործունեության պայմանների համար» թեմայով գիտահետազոտական աշխատանքներում:

Բացի դրանից, «Ամբերդ» կենտրոնը՝ որպես համակատարող, մասնակցել է նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պատվերով Եվրազես միջխորհրդարանական վեհաժողովին կից համալսարանի կողմից իրականացվող «Եվրասիական ներդրումային և գիտատեխնոլոգիական կոնսորցիումների ձևավորման գիտամեթոդական ապահովումը ԵԱՏՄ անդամ երկրների և համաշխարհային փորձի հաշվառմամբ» հետազոտական ծրագրի աշխատանքներին:

Կենտրոնի փորձագետները մասնակցել են նաև Եվրազես միջխորհրդարանական վեհաժողովին կից համալսարանի կողմից նախաձեռնված «Актуальная Евразия» խորագրով կոլեկտիվ մենագրության պատրաստմանը, որը լույս կտեսնի 2023 թ.:

2022 թ. լույս է տեսել «Ամբերդ» գիտահանրամատչելի տեղեկագրի և «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի 6-ական համար: Տեղեկագրի 5-րդ համարը հրատարակվել է ռուսերեն, 6-րդ համարը՝ անգլերեն, իսկ երկրորդ՝ հատուկ թողարկումը նվիրված է եղել ռուս-ուկրաինական հակամարտությանը և ՀՀ տնտեսության վրա դրա հնարավոր ազդեցություններին: «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի 5-րդ և 6-րդ համարները լույս են տեսել անգլերեն լեզվով:

«Ամբերդ» կենտրոնում փորձաքննության են ենթարկվել և համապատասխան առաջարկությունների փաթեթներ են մշակվել հետևյալ իրավական ակտերի վերաբերյալ.

- Սփյուռքի պարտատոմսերի թողարկման հայեցակարգ
- «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

- «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- Գնումների համակարգի շարունակական բարելավումների շրջանակում օրենսդրական փոփոխություններ
- ՀՀ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի (ասպիրանտուրա) բարեփոխումների հայեցակարգ
- 2022 թ. վիճակագրական ծրագրի նախագիծ
- «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «Բարեգործության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- ՀՀ տնտեսական քաղաքականության հայեցակարգ
- Եկամուտների քաղաքականության վերափոխման համապարփակ (ոչ հատվածավորված) տեսլական

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում 2022 թ. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի դրամաշնորհային ֆինանսավորմամբ իրականացվել է «Հայաստանի պարենային անվտանգության բարձրացումը շրջանաձև տնտեսության կառուցակարգերի ներդրման պայմաններում» հետազոտությունը, որի աշխատանքները համակարգվել են կենտրոնի կողմից:

2022 թ. հոկտեմբերի 19-21-ը, Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական համալսարանի հետ համատեղ, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը կազմակերպել է միջազգային գիտաժողով՝ «Նոր տնտեսական աշխարհակարգը, անցյալի դասերն ու ժամանակի մարտահրավերները» խորագրով:

2022 թ. ՀՊՏՀ ակադեմիական անձնակազմի կողմից հրապարակվել է 25 մենագրություն, 16 ուսումնական ձեռնարկ, 8 թեզիս, 330 հոդված, որից 187-ը՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի հայաստանյան ամսագրերում, 89-ը՝ միջազգային պարբերականներում, որոնցից 29-ը՝ Scopus կամ WoS շտեմարաններում: Ազդեցության գործակից ունեցող Scopus կամ WoS շտեմարաններում ՀՊՏՀ-ականների հրապարակումները, նախորդ ուսումնական տարվա համեմատ, աճել են շուրջ 80%-ով:

Նույն ժամանակաշրջանում ՀՊՏՀ աշխատակիցները 62 վերլուծական ակնարկներ են պատրաստել և հրապարակել ՀՀ տնտեսության և հանրային կյանքի առանցքային խնդիրների վերաբերյալ, մասնակցել են 50 սեմինարների, 34 workshop-երի, 24 դրամաշնորհային ծրագրերի: Ակադեմիական կազմի 161 դասախոսներ և ասպիրանտներ մասնակցել են ազգային և միջազգային բազմաթիվ գիտաժողովների:



## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ IV

### Միջազգայնացման ընդլայնում

#### *Միջազգային գործընկերություն*

2022 թ. համալսարանի Միջազգային կապերի բաժինը շարունակել է միջազգային գործընկերության ընդլայնմանն ուղղված քայլերը: Այսպես, ավելի քան 20 համագործակցության հուշագիր է կնքվել օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և համաձայնություն է ձեռք բերվել իրականացնելու ուսանողների, դասախոսների ու հետազոտողների փոխանակման ծրագրեր, ինչպես նաև կազմակերպելու միջազգային գիտակրթական միջոցառումներ ու համատեղ դիմելու տարբեր դրամաշնորհային ծրագրերի:

Հաստատվել է ՄԱԿ-ի Կայուն զարգացման լուծումների ցանցին (ԿԶԼՑ) (UN SDSN) բուհի անդամակցությունը, որին հայտ էր ներկայացվել դեռևս 2021 թ.: Որպես ՄԱԿ-ի ԿԶԼՑ-ի լիիրավ անդամ՝ ՀՊՏՀ-ն արտոնյալ հնարավորություն ունի օգտվելու SDSN Mobilize առցանց հաղորդակցման հարթակից, որը թույլ է տալիս անմիջական կապ հաստատել կայուն զարգացման ոլորտի փորձագետների հետ, մասնակցել բազմաթիվ միջոցառումների, գիտաժողովների և ներգրավվել դրամաշնորհային ծրագրերում և համագործակցություն հաստատել բազմաթիվ գիտահետազոտական կառույցների հետ:

Անդամակցության հայտ է ներկայացվել Եվրասիական ցանցային համալսարանական կոնսորցիումին (ԵՑՀԿ): ՀՊՏՀ թեկնածությունը հաստատվել է ս.թ.հունիսի 23-ին: Այժմ քննարկվում են ԵՑՀԿ անդամ բուհերի հետ համատեղ կրթական և հետազոտական, ինչպես նաև ակադեմիական շարժունության ծրագրեր իրականացնելու հնարավորությունները:

Համալսարանը միացել է նաև ԱՊՀ ցանցային համալսարանի շրջանակներում գործող «Տնտեսագիտություն» մագիստրոսական մասնագիտության «Միջազգային առևտուր» և «Միջազգային լոգիստիկա» կրթական ծրագրերին:

Համագործակցության պայմանագիր է կնքվել ձեռնարկատիրական հավելվածների աշխարհի խոշորագույն մատակարար SAP University Alliances կլաստերի հետ:

#### *Շարժունության ծրագրեր*

Միջազգայնացման գլխավոր նպատակներից մեկը ուսանողների և դասախոսների շարժունության ընդլայնումն է: Հաշվետու տարում ուսանողների, ակադեմիական և վարչական կազմի փոխանակումը կատարվել է առավելապես ԵՄ «Էրազմուս+» ծրագրի հիմնական գործողություն 1-ի շրջանակում, որին մասնակցել են ՀՊՏՀ 39 դասախոս ու վարչական աշխատակից և 30 ուսանող: Միևնույն ժամանակ, բուհը հյուրընկալել է գործընկեր բուհերի 23 դասախոսի և վարչական աշխատակցի:

Բացի դրանից, ՀՊՏՀ-ն շարունակել է ուսանողների փոխանակման ծրագրեր իրականացնել Ուրալի պետական տնտեսագիտական համալսարանի հետ, որտեղ հաշվետու տարում ուսումնառել է 2 ուսանող:

Բացի ուսումնական ծրագրերից, ՀՊՏՀ ուսանողները մասնակցել են ՌԴ Սամարա քաղաքում կայացած «Ռուսաստանյան ուսանողական գարուն» համառուսաստանյան 30-րդ փառատոնին և «Եվրասիա Գլոբալ-2022» միջազգային երիտասարդական կրթական համաժողովին, որը տեղի է ունեցել Օրենբուրգ քաղաքում:

Ընթացիկ տարում շարունակվել է համագործակցությունը գերմանական «Կոպենհիկուս Բեռլին» ասոցիացիայի հետ, որի շրջանակներում մեկ ուսանող հնարավորություն է ստացել Միջազգային գերազանցության կրթաթոշակային ծրագրով (IES) մեկ կիսամյակ ուսումնառելու Հումբոլտի համալսարանում:

ՀՊՏՀ մեկ տասնյակ ուսանող հնարավորություն են ստացել մասնակցելու Գերմանիայում, Իտալիայում և Իսպանիայում կայացած 7 միջազգային սեմինարների:

Համաձայնություն է ձեռք բերվել նաև Եվրասիական տնտեսական ընկերակցության Եվրագես միջխորհրդարանական վեհաժողովին կից համալսարանի հետ՝ 2022-2023 ուսումնական տարվա գարնանային կիսամյակում իրականացնելու ուսանողների և անձնակազմի փոխանակային ծրագրեր:

### **Միջոցառումներ**

2022 թ. կազմակերպվել են նաև մի շարք միջազգային և գիտակրթական միջոցառումներ: Այսպես, ՀՊՏՀ-ի և Պոզնանի տնտեսագիտության և բիզնեսի համալսարանի միջև համագործակցության շրջանակներում տեղի է ունեցել միջազգային գիտական սեմինար, որին մասնակցել են ՀՊՏՀ ռեկտոր Դ. Գալոյանը, երկու բուհերի ակադեմիական կազմի ներկայացուցիչներ:

Ցվիկաոյի կիրառական գիտությունների համալսարանի (Գերմանիա) Արևելյան Ասիայի կենտրոնի հետ համատեղ ՀՊՏՀ-ն անցկացրել է միջազգային գիտաժողով՝ «Հայաստանը և «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը. Մարտահրավերներ և խնդիրներ» («Ֆուլցվագեն հիմնադրամի» ֆինանսավորմամբ): Գիտաժողովին մասնակցել են ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Վիկտոր Ռիխտերը, ՀՀ-ում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպան Ֆան Յոնգը, նախագծի համակարգող Ռալֆ Ռոբեյը, միջազգայնագետներ, դիվանագետներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

«Կատարողականի հաշվեքննության զարգացումը ՀՀ-ում» ծրագրի շրջանակներում (ԱՄՆ պետքարտուղարության և Ամերիկյան խորհուրդների գրասենյակի աջակցությամբ իրականացվող Professional Fellowship program ծրագրով) ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ Հայկ Բեջանյանը և ԱՄՆ Ֆլորիդայի համալսարանի պրոֆեսոր Գարի Վանլենդինգհեմը ՀՊՏՀ-ում անցկացրել են միջազգային

աշխատաժողով՝ նվիրված «Կատարողականի հաշվեքննություն» ձեռնարկի մշակմանը:

2022 թ. ընթացքում ՀՊՏՀ-ն հյուրընկալել է ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անն Լոյոյին, Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) Թբիլիսի տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Գեբհարդ Ռոյլին և կրթաթոշակների և ուսումնական ծրագրերի համակարգող Արևիկ Հարությունյանին, իսպանական Լա Լիգայի գլոբալ ցանցի տարածաշրջանային պաշտոնական ներկայացուցիչ Խոսե Կառլոս Լոպեսային, Վորոնեժի պետական համալսարանի ռեկտոր Դմիտրի Ենդոլիցկիին և միջազգային մրցունակության գծով ռեկտորի օգնական Յուլյա Սվետաշովային, ՌԴ տնտեսական զարգացմանն առընթեր միջազգային առևտրի համառուսաստանյան ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Մուրիլևին և պրոռեկտոր Նատալյա Վոլչկովային, Նիդեռլանդների Սաքսիոնի կիրառական գիտությունների համալսարանի պրոֆեսոր Ֆրենկ Ստիկսմային, Եվրագես միջխորհրդարանական վեհաժողովին կից համալսարանի միջազգային ծրագրերի բաժնի ղեկավար Աննա Բախտերին և նույն համալսարանի բիզնես հաղորդակցությունների ֆակուլտետի դեկան Նատալյա Կիրսանովային, ԱՄՆ Ֆլորիդայի համալսարանի հանրային կառավարման ծրագրի տնօրեն Գարի Վանլենդինգհեմին, Վիշեգրադյան միջազգային հիմնադրամի տնօրեն Պետր Մարեշին, հիմնադրամի ներկայացուցիչներ Աննա Ադամչիկին և Եվա Մերենքսին:

### **Միջազգային դրամաշնորհային ծրագրեր**

Հաշվետու տարում Միջազգային կապերի բաժինը շարունակել է իրականացնել առկա դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նախատեսված գործողությունները.

- «Էրազմուս+»-ի «Ժան Մոնե ներվորք» ծրագրի «ԵՄ և ԵԱՏՄ. Հակամարտության և մրցակցության միջև, մերձեցում և համագործակցություն» EUCON նախագծի շրջանակներում մայիսի 24-ին ՀՊՏՀ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտության մագիստրանտներն այցելել են ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ: Հունիսի 15-ին տեղի է ունեցել կլոր սեղան-քննարկում, որի նպատակը փորձագետների և գիտնականների կառուցողական բանավեճի միջոցով Հայաստանի արտաքին քաղաքականության ավելի խոր ու համակողմանի ըմբռնումն էր: Կլոր սեղանին մասնակցել են ուսանողներ, հետազոտական ինստիտուտների ղեկավարներ, հետազոտողներ, տեղական և միջազգային ակադեմիական հաստատությունների, պետական կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ (ՀՊՏՀ, Նորարարության և ձեռներեցության ազգային կենտրոն, Հայաստանում «Էրազմուս+» ազգային գրասենյակ, Կիրառական գիտությունների համալսարան BFI (Վիեննա), Պասսաուի համալսարան (Գերմանիա), Գդանսկի համալսարան

(Լեհաստան), Ռուսաստանի Դաշնության դեսպանություն Հայաստանում): Հաշվետու տարում նաև տեղի են ունեցել նախագծով ծրագրված այցեր. սեպտեմբերի 5-9 Բուդապեշտի Կորվինուսի համալսարանում ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի դոցենտ Ս. Աղաջանյանը մասնակցել է ամառային դպրոցի, իսկ նույն ամբիոնի դասախոս Ա. Հայրապետյանը՝ նոյեմբերի 16-18-ը Վիեննայի կիրառական գիտությունների համալսարանում՝ սեմինարի:

- Ընթացիկ տարում իրականացվել և ամփոփվել է «Էրազմուս+»-ի «Ժան Մոնե մոդուլ» ծրագրի «ԵՄ քաղաքականությունը, գործող կարգավորումներն ու վարչական կառուցվածքը» EU-PPP նախագիծը: Մոդուլի շրջանակներում տեղի է ունեցել կլոր սեղան-քննարկում՝ «ԵՄ ներդրումային փաթեթը Հայաստանի համար» թեմայով, իսկ հունիսի 14-ին՝ եռամյա նախագծի փակման արարողությունը:

- Հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները «Ասիայում և Կովկասում թվային կրթության միջազգայնացում» (IDEA) նախագծի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) կողմից: Նախագծի գործընկերների հետ պատրաստվել և համաձայնեցվել են «Ինֆորմատիկա և կառավարում» կրկնակի մագիստրոսական ծրագրի համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և ուսումնական պլանը: ՀՊՏՀ-ի կողմից պատրաստված փաստաթղթերը ներկայացվել են գերմանական ASIIN - Global Leader in Quality Assurance in Higher Education հավատարմագրման հանձնաժողովին: Հավատարմագրման հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել Ցվիկաոյում, դեկտեմբերին, դրան մասնակցել է ՀՊՏՀ արտաքին կապերի դեսպարտամենտի տնօրեն Լ. Դանիելյանը: Նախագծի շրջանակներում նաև մի շարք աշխատաժողովներ և այցեր են կայացել Ցվիկաոյի համալսարանում: Հունիսի 19-26-ը ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյանը, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկան Ն. Կեսոյանը և ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկան Ս. Խաչիկյանը մասնակցել են Ցվիկաոյի կիրառական գիտությունների համալսարանում անցկացված քննարկումներին և հանդիպումներին: Իսկ նոյեմբերի 14-18-ը Սոս Խաչիկյանը մասնակցել է նույն համալսարանում տեղի ունեցած վերապատրաստմանը: Նախագծի շրջանակում ՀՊՏՀ-ն հյուրընկալել է նաև Ցվիկաոյի կիրառական գիտությունների համալսարանի ներկայացուցիչներ պրոֆեսոր Ք. Շումանին, պրոֆեսոր Ք. Բրաուվեյլերին և Ս. Նոակին:

- Վիշեգրադյան միջազգային հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվել և ամփոփվել է «Վիշեգրադյան քառյակի փորձի յուրացումը գիտելիքի և տեխնոլոգիաների փոխադրման բնագավառում» նախագիծը: Նախագծի նպատակը գիտական հետազոտությունների առևտրայնացումը և ձեռնարկություն-գիտահետազոտական ենթակառուցվածք համագործակցության մշակույթի խթանումն էր Հայաստանում և Վրաստանում: Չնայած համավարակի առաջացրած խոչընդոտներին՝ ՀՊՏՀ-ն՝ որպես

նախագծի համակարգող, իրականացրել է ոչ միայն նախատեսված բոլոր միջոցառումները, այլ նաև հավելյալ գործողություններ՝ հարցում կատարելով ՎՄՀ-ին: Ամփոփվել են «Բիզնես-գիտություն» համագործակցության խթանմանն ուղղված մրցույթի արդյունքները, հաղթող կազմակերպությունների հետ կատարվել են աշխատանքներ, ինչպես նաև եռակողմ պայմանագրեր են ստորագրվել ՀՊՏՀ-ի, «Գրանթ Թորնթոն Քոնսալթինգ» ՓԲԸ-ի (Grant Thornton Consulting), «Կրեո» ՍՊԸ-ի (CREO Project Solutions) և «Բիզնես-հետազոտական ենթակառուցվածք» մրցույթի 1-ին, 2-րդ և 3-րդ տեղը զբաղեցրած մասնակիցներ «Արմինե Աբրահամյան» ԱԶ-ի (Symphony of Nature), «Գեբեսերտ» (GebeCert) և «ԷյԱյՓի» (AIP Tech) ընկերությունների միջև: Նախագծի շրջանակներում ապրիլի 4-7-ը Չեխիայի Հանրապետության Բոնո քաղաքի Մասարիկի համալսարան ուսումնական այցի նպատակը Հայաստանի և Վրաստանի հետազոտական ինստիտուտների և փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) ներկայացուցիչներին հետազոտությունների առևտրայնացման եվրոպական փորձը փոխանցելն էր: ՀՊՏՀ-ից մասնակցել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն Դ. Հախվերդյանը: Ապրիլի 26-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում տեղի է ունեցել «Վիշեգրադյան քառյակի փորձի յուրացումը գիտելիքի և տեխնոլոգիաների փոխադրման բնագավառում» նախագծի արդյունքների ներկայացման և ամփոփման տեղեկատվական միջոցառումը, որին մասնակցել են շահագրգիռ նախարարությունների, բուհի ղեկավար կազմի, ստորաբաժանումների, փոքր և միջին ձեռնարկությունների ներկայացուցիչներ: Նախագծի ավարտից հետո Վիշեգրադյան միջազգային հիմնադրամին են ներկայացվել նախագծի ֆինանսական և ընդհանուր հաշվետվությունները:

- «Լեռնահանքային արդյունաբերության գործունեության ազդեցության գնահատումը ազդակիր (շրջակա) համայնքների բնակչության առողջության վրա» մոդելային օրենքի նախագծի շրջանակներում ՀՊՏՀ-ում, շահագրգիռ մարմինների մասնակցությամբ, տեղի է ունեցել գիտագործնական սեմինար: Միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Մ. Մելքումյանը հոկտեմբերի 26-29 մասնակցել է Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքում կայացած մշտական հանձնաժողովի հերթական նիստին և ներկայացրել մոդելային օրենքի նախագիծը:

### **Վարկանշավորում**

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են աշխատանքները QS World University Rankings կազմակերպության հետ՝ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բուհերի QS EECA University Rankings 2022 վարկանշավորման աղյուսակում դիրքի ամրապնդման ուղղությամբ. ՀՊՏՀ-ն այս պահին զբաղեցնում է 241-250-րդ տեղը:

Աշխատանքներ են կատարվել նաև համաշխարհային բուհերը վարկանշավորող THE TIMES Impact Ranking-ի հետ, որում հայաստանյան բուհերից միայն ՀՊՏՀ-ին է հաջողվել վարկանշավորվել: THE TIMES Impact Ranking վարկանիշում աշխարհի բոլոր

համալսարանները գնահատվում են ըստ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին համապատասխանության սկզբունքի: ՀՊՏՀ-ին վերաբերող տեղեկությունը 3-րդ տարին անընդմեջ տրամադրվել է THE TIMES Impact Ranking-ին, իսկ վարկանշավորման արդյունքները պարզ կլինեն 2023 թ. ապրիլին:

Հաշվետու տարում ՀՊՏՀ-ն ընդլայնել է միջազգային վարկանշավորման կազմակերպությունների հետ համագործակցությունը և բուհի վերաբերյալ տեղեկություն է տրամադրվել միաժամանակ 3 նոր հեղինակավոր վարկանշավորման կազմակերպությունների՝ Round University Ranking (RUR), Clarivate Analytics և UI GreenMetric: Վարկանշավորման արդյունքներն ակնկալվում են 2023 թ. սկզբին:

Webometrics Ranking of World Universities աղյուսակում ՀՊՏՀ-ն բարելավել է իր հորիզոնականը՝ անցում կատարելով 9650-րդից 7985-րդ հորիզոնականին: Webometrics Ranking of World Universities վարկանշավորման համակարգը հաշվի է առնում բուհի կայքէջի բովանդակության ծավալը և հրապարակումների տեսանելիությունն ու ազդեցությունը՝ ըստ արտաքին հղումների քանակի:

Հաշվետու տարում բանակցություններ են վարվել նաև U-Multirank World University Rankings և 4iCU University Web Rankings կազմակերպությունների հետ՝ 2023 թ. ՀՊՏՀ-ի վերաբերյալ տեղեկությունը վերջիններիս տրամադրելու և բուհի ներգրավվածությունն այդ կազմակերպությունների աշխատանքում ապահովելու համար:

### ***Օտարերկրյա դիմորդներ***

Հաշվետու տարում ՀՊՏՀ-ում մեկնարկել է օտարերկրյա ուսանողների հավաքագրումը «Կառավարում (ըստ ոլորտի)» բակալավրի և «Գործարար վարչարարություն (Կառավարում)» մագիստրոսի կրթական ծրագրերով (անգլերեն): Շուրջ հարյուր օտարերկրյա դիմորդների հետ հաստատվել է նամակագրություն, անցկացվել են հարցազրույցներ: Արդյունքում ՀՀ ԿԳՄՍՆ են ուղարկվել 19 դիմորդների փաստաթղթեր՝ հաշվառման և փորձաքննության համար: Հաստատում են ստացել 8 դիմորդ՝ «Կառավարում (ըստ ոլորտի)» բակալավրի և 9 դիմորդ՝ «Գործարար վարչարարություն (Կառավարում)» մագիստրոսի կրթական ծրագրերով սովորելու համար: Միջազգային խորհրդատու ներկայացուցիչների և կազմակերպությունների հետ բազմաթիվ հանդիպումների և բանակցությունների արդյունքում կնքվել են համագործակցության պայմանագրեր:

## **ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ V**

### **Ակադեմիական էթիկայի և սոցիալական պատասխանատվության սկզբունքների ներդրում**

ՀՊՏՀ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Ակադեմիական էթիկայի և սոցիալական պատասխանատվության սկզբունքների ներդրում» ռազմավարական նպատակին համապատասխան՝ 2022 թ. մշակվել և գործողության մեջ են դրվել [«ՀՊՏՀ-ում մագիստրոսական թեզի կատարման, պաշտպանության ներկայացման և հրապարակային պաշտպանության»](#) ու [«ՀՊՏՀ-ում ավարտական աշխատանքի կատարման, պաշտպանության ներկայացման և հրապարակային պաշտպանության»](#) կանոնակարգերը, որոնց պահանջներով պայմանավորված՝ ՀՊՏՀ հակագրագողության համակարգում պարտադիր կերպով ստուգվելու են բոլոր ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերը, և սահմանված պահանջներին չհամապատասխանող կամ ինքնուրույնության (ինքնատիպության) սահմանված շեմից ցածր աստիճան ունեցող աշխատանքները հեռացվելու են պաշտպանության գործընթացից:

ՀՊՏՀ սոցիալական պատասխանատվության ստանձման միջոցառումների շրջանակներում 2022 թ. համալսարանն ապահովվել է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար անհրաժեշտ ենթակառուցվածքներով. 2 մասնաշենքերում կառուցվել են թեքահարթակներ, սանհանգույցները հարմարեցվել են առանձնահատուկ պայմաններին:

ՀՊՏՀ-ում ուսման վարձի մասնակի փոխհատուցման (զեղչի) իրավունք է ստացել 1667 ուսանող, որից 114-ը՝ ՀՊՏՀ մասնաճյուղերի, 50-ը՝ ՀՊՏՀ քոլեջի սովորող:

Իրականացվում են նաև աշխատակիցներին ուղղված սոցիալական պատասխանատվության ծրագրեր, այսպես՝ 2022 թ. 429 աշխատակցի համար առողջապահության ապահովագրության փաթեթ է ձեռք բերվել «Ռոսգոսստրախ Արմենիա» ընկերությունից, տրամադրվել են նպաստներ 2 նորաստեղծ ընտանիքների աջակցման և 10 երեխայի ծննդյան խրախուսման համար:

Ֆինանսական ու նյութական աջակցման ծրագրեր են իրագործվել՝ հասցեագրված Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինծառայողներին՝ վերականգնողական բուժման նպատակով:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրեր իրականացվել են նաև ՀՊՏՀ ուսանողների կողմից՝ ՀՊՏՀ Change Lab-ի և գործընկերների աջակցությամբ: Այսպես, «Կազա» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի՝ 2021-2022

ուստարվա համար «Հիրշման» կրթաթոշակի արժանացած ՀՊՏՀ 4 ուսանողներ հաջողությամբ ավարտել են համայնքի զարգացմանն ուղղված իրենց նախագծերը, իսկ 2022-2023 ուստարում այդ կրթաթոշակին մասնակցելու համար ՀՊՏՀ ուսանողների հետ գեներացվել և մշակվել են համայնքի զարգացմանն ուղղված նախագծերի գաղափարներ, որոնք այնուհետև ներկայացվել են վերոնշյալ հիմնադրամի ժյուրիի անդամներին: Նրանցից 7-ը (1-ը՝ Գյումրու մասնաճյուղից) արժանացել է կրթաթոշակի: Change Lab-ը մրցույթում հաղթած ուսանողներին գաղափարների իրականացման գործընթացում կտրամադրի խորհրդատվություն և մենթորություն:

2022 թ. Մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժինը շարունակել է հասարակայնության հետ կապերի ամրապնդմանն ուղղված լրատվատեղեկատվական և մարքեթինգային աշխատանքները՝ սպասարկելով (բովանդակային և տեխնիկական) համալսարանի առցանց հանրային հարթակները:

Բուհի տեղեկատվական քաղաքականության և հանրային հաշվետվողականության գլխավոր հաղորդակցային ուղին ՀՊՏՀ պաշտոնական կայքն է: Այստեղ լուսաբանվել են բուհական կարևորագույն իրադարձությունները, հրապարակվել են հայտարարություններ, բուհի կենսագործունեությունը կարգավորող հիմնարար փաստաթղթեր, կառավարման մարմինների նիստերի օրակարգեր, որոշումներ, ուսումնական գործընթացին վերաբերող տեղեկատվություն (դասացուցակներ, քննագրաֆիկներ): Թեպետ ընթացիկ տարում նորությունների թիվը կայքում նվազել է, սակայն բազմազանեցվել է սպասարկվող սոցիալականների բովանդակությունը՝ տեսաշարեր, հրապարակումներ, ռիկեր, տեսանյութեր և այլն: Կայքը պարբերաբար թարմացվել է մասնավորապես՝ «Դիմորդ» խորագրի ներքո ստեղծվել-ձևավորվել է նոր բաժին, և սպասարկումն իրականացվել է ընդունելության ամբողջ գործընթացում: Թարմացվել են ամբիոնների էջերը՝ տեղեկատվությունը, աշխատակազմերի ցանկերը, լրացվել են CV-ները, վերանայվել են միջազգային ծրագրերին, «Ամբերդ» հետազոտական կենտրոնին, ինչպես նաև գիտության, կարճաժամկետ դասընթացների, կարիերայի, ուսումնական գործընթացի և կառավարման մարմինների գործունեությանը վերաբերող էջերը:

Ֆեյսբուքյան հարթակում հրապարակվել է բաժնի կողմից պատրաստված ամբողջ կոնտենտը՝ լուրեր, հայտարարություններ, անդրադարձներ, գալիք միջոցառումների մասին հրապարակումներ (event), էջում հրապարակվել են պատմություններ (story), ուղիղ միացումներ (live)՝ խոշոր միջոցառումներից, ռիկեր, պատրաստվել են ֆոտոշարքեր, անդրադարձներ պետական տոներին, կազմակերպվել են մրցույթներ (հուդիների, լուսանկարների):

Ինստագրամյան էջը ևս լուսաբանել է համալսարանական կարևորագույն իրադարձությունները: Էջի համար պատրաստվել են հատուկ շարքեր՝ «5 հարց դասախոսին» (11 հրապարակում), «Մեր լավագույնները» (24 հրապարակում), «Օգտակար



խորհուրդներ» (9 հրապարակում) և այլն, իսկ տարեվերջին էջի առաջխաղացման համար սկսվել է առաջին կուրսեցիների ֆոտոշարքերի պատրաստումն ու հրապարակումը: Այս հարթակում ևս իրականացվել են ուղիղ միացումներ (live), տեղադրվել են պատմություններ (story), ռիկեր:

Լինկդինյան հարթակում հրապարակումներն ուղղված են եղել հիմնականում միջազգային լսարանին:

Աշխատանքներ են կատարվել բուհի յուրօրյան էջի ակտիվացման ուղղությամբ, պատրաստվել են ռեպորտաժներ, իսկ 2022-2023 ուստարվանից սկսած՝ մեկնարկել է բուհի տասնօրյա լրահոսը պարբերաբար ներկայացնող տեսաշարը:

Հրապարակումներ են պատրաստվել նաև ՀՊՏՀ բլոգի համար: Բացի լուրերից, բլոգում տեղ են գտել դեռևս 2021 թ. տարեվերջից սկսված նախագծերը՝ «Երիտասարդ դասախոս» (32 հարցազրույց), «Պատերազմին հաղթածները» (12 հրապարակում), «Փոքր դիմանկար՝ մեծ ապագայի նախաշեմին» (14 դիմանկար):

Անցնող տարում բաժինն իրականացրել է մամուլի հրապարակումների մշտադիտարկում, տարածել հաղորդագրություններ բուհի կարևորագույն իրադարձությունների վերաբերյալ, պատասխանել ԶԼՄ-ների բազմաթիվ հարցերի, պատրաստել պարզաբանումներ, ծանուցումներ, կազմակերպել հարցազրույցներ, կամրջել է մամուլի և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագիտական թիմի աշխատանքները (մամուլում տնտեսագիտական հիմնարցերի պարզաբանումներ):

Բաժնում ձևավորվել են բուհական խոշոր միջոցառումների բովանդակությունն արտացոլող նոթատետրեր, վկայականներ, պաստառներ, բաներներ, իվենթների նկարներ և այլն: Բաժինը ֆոտո, վիդեո, տեղեկատվական, դիզայնական և խմբագրական աջակցություն է ցուցաբերել նաև մյուս ստորաբաժանումներին:

Համալսարանական երկու կարևոր միջոցառումների համար («Կրթություն և կարիերա EXPO-2022», «Շրջանավարտ-2022») իրականացվել է մարքեթինգային արշավ՝ մշակվել է միջոցառումների ռազմավարական հայեցակարգը, կազմակերպվել է առցանց հարթակներում միջոցառումների տարածումն ու իրազեկումը, այդ միջոցառումների այլ բաղադրիչների պատրաստումը (բաներներ, պոստերներ, իրազեկող նյութեր):

Հետադարձ կապի մեխանիզմները ևս գործուն են. ՀՊՏՀ ֆեյսբուքյան, ինստագրամյան էջերի և բաժնի էլփոստերը սպասարկվում են օպերատիվ կերպով:

## ԽՆԴԻՐՆԵՐ

1. Բակալավրիատից մագիստրատուրա և մագիստրատուրայից ասպիրանտուրա անցման ցուցանիշը ոչ բավարար է:
2. Առկա են խնդիրներ աշխատանքային ընթացակարգերի սահմանված վերջնա-ժամկետների և բովանդակության պահպանման առումով:
3. Առկա են էական շեղումներ բանավոր հարցումների և համակարգչային ստուգում-ների արդյունքների միջև՝ լուծարքների, 12 կրեդիտ ակադեմիական պարտքի և շարժունության տարբերությունների հանձնման փուլերում:
4. Ակտիվության բաղադրիչի և համակարգչային ստուգումների արդյունքներով գնա-հատականի միևնույն տոկոսն ապահոված ուսանողների հարաբերակցությունը ոչ բավարար մակարդակի է:
5. Հեռակա բակալավրի կրթական ծրագրերի ուսանողների առաջադիմություն բա-վարար չէ:
6. Moodle.asue.am հարթակից և օտարալեզու գրականությունից օգտվող ուսանող-ների քանակությունը ոչ բավարար մակարդակի է:
7. Փոքր է տնտեսության մասնավոր հատվածից ստացված հետազոտական պատ-վերների քանակն ու այդ մասով ֆինանսական մուտքերի ծավալը:
8. Ցածր է հետազոտական նախագծերում ներգրավման մոտիվացիան և իրակա-նացվող հետազոտական նախագծերում ներգրավված ակադեմիական կազմի մասնաբաժինն ընդհանուր ակադեմիական կազմի մեջ:
9. Փոքր է ՀՊՏՀ արտաքին գործընկերների մասնակցությամբ համատեղ իրակա-նացվող հետազոտական նախագծերի քանակը:
10. Թեև ՀՊՏՀ-ում թեկնածուական ատենախոսություն պաշտպանած դասախոսների աշխատավարձը մի քանի անգամ բարձր է հանրապետության համանման ցու-ցանիշի միջինից, այնուամենայնիվ, սա բավարար խթան չէ գիտությամբ զբաղվելու համար, շրջանավարտների ընդհանուր թվի մեջ շատ փոքր է կրթության երրորդ աստիճանն ատենախոսության պաշտպանությամբ ավարտողների մասնա-բաժինը:
11. Թեև վերջին 2 տարում Scopus և WoS շտեմարաններում ընդգրկված ամսագրերում ՀՊՏՀ ակադեմիական կազմի հրապարակումների թիվն աճում է, սակայն հրապարակվող հեղինակների շրջանակը մեծ չէ՝ ընդհանուր ակադեմիական կազմի ընդամենը 3%-ը:
12. Ցածր է ակադեմիական կազմի հետաքրքրվածությունը միջազգային նախագծե-րով, փոխանակային և դրամաշնորհային ծրագրերով:

13. Բավարար մակարդակի վրա չէ ակադեմիական կազմի՝ հղման գործակից ունեցող միջազգային ամսագրերում հրապարակման և հղման տոկոսը, ինչը խոչընդոտում է միջազգային վարկանշավորման աղյուսակներում ներառվելուն և դիրքի առաջընթացի ապահովմանը:
14. Առկա են օրենսդրական խոչընդոտներ միջազգային խորհրդատու-ներկայացուցիչների (recruitment agent) հետ աշխատանքներում, ինչն էլ դժվարացնում է օտարերկրացի ուսանողների հավաքագրման գործընթացը:
15. Առկա չէ ուսանողների և դասախոսների հաղորդակցման ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով հագեցած միասնական հարթակ (բուհի կողմից տրամադրվող էլեկտրոնային հասցե, հեռախոսի հավելված և այլն), ինչը սահմանափակում է համալսարանի գործունեության և առկա ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության արագությունն և հասցեականությունը:
16. Բավարար մակարդակի վրա չէ ուսանողների շրջանում բուհի գործունեության մասին (Կարիերայի կենտրոն, Միջազգային բաժին և այլն) իրազեկվածությունը:
17. Փոքր է կարճաժամկետ դասընթացների և աշխատաժողովների համար հարմարեցված, ժամանակակից դիզայնով և տեխնոլոգիական լուծումներով հագեցած աշխատասենյակների թիվը:



ՀԱՎԵԼՎԱԾ

## **ՀՊՏՀ կրթական ծրագրերը և մասնագիտությունները**

### **Բակալավրիատ**

<b>Ծածկագիր</b>	<b>Ֆակուլտետ</b>	<b>Կրթական ծրագիր</b>
031101.01.6	Տնտեսության կարգավորում և միջազգային տնտեսական հարաբերություններ	Տնտեսագիտություն
052201.01.6	Տնտեսության կարգավորում և միջազգային տնտեսական հարաբերություններ	Բնապահպանություն և բնօգտագործում
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և աուդիտ	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/
041201.01.6	Ֆինանսներ	Ֆինանսներ /ըստ ոլորտի/
041301.01.6	Կառավարում	Կառավարում /ըստ ոլորտի/
101501.01.6	Կառավարում	Զբոսաշրջություն
101801.01.6	Կառավարում	Սերվիս
041401.01.6	Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպում	Շուկայագիտություն (մարքեթինգ) /ըստ ոլորտի/
056201.01.6	Ինֆորմատիկա և վիճակագրություն	Վիճակագրություն
056802.01.6	Ինֆորմատիկա և վիճակագրություն	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա
061104.01.6	Ինֆորմատիկա և վիճակագրություն	Տեղեկատվական համակարգեր

### **Մագիստրատուրա**

<b>Ծածկագիր</b>	<b>Ֆակուլտետ</b>	<b>Կրթական ծրագիր</b>
031101.02.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Տնտեսագիտության տեսություն
031101.04.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Միջազգային տնտեսական հարաբերություններ
031101.06.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Բնօգտագործման տնտեսագիտություն
031101.16.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Մակրոտնտեսական վերլուծություն
031101.21.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Նորարարությունների տնտեսագիտություն
041201.08.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Մաքսային վարչարարություն
041101.01.7	Հաշվապահական հաշվառման և աուդիտի	Հաշվապահական հաշվառում (ըստ ոլորտի)
041101.03.7	Հաշվապահական հաշվառման և աուդիտի	Աուդիտ
041301.17.7	Կառավարման	Հանրային կառավարում
041301.04.7	Կառավարման	Գործարար վարչարարություն (կառավարում)
041301.31.7	Կառավարման	Առողջապահության կառավարում և վարչարարություն
041301.33.7	Կառավարման	Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում
041301.07.7	Կառավարման	Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում
041301.13.7	Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման	Նախագծերի կառավարում
041401.04.7	Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման	Մարքեթինգային հաղորդակցություններ
041301.27.7	Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման	Մարդկային ռեսուրսների կառավարում
041301.32.7	Ինֆորմատիկայի և վիճակագրության	Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում
056201.04.7	Ինֆորմատիկայի և վիճակագրության	Կիրառական վիճ. և տվյալների գիտություն
041201.03.7	Ֆինանսների	Հանրային ֆինանսներ
041201.04.7	Ֆինանսների	Կորպորատիվ ֆինանսներ
041201.05.7	Ֆինանսների	Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում
041201.06.7	Ֆինանսների	Բանկային գործունեության կազմակերպում

## ՀՊՏՀ դասախոսական և վարչական անձնակազմը

### Հիմնական

Պաշտոնը/կոչումը	Քանակը	Այդ թվում՝ վարչական համարեղողներ
Պրոֆեսոր	18	3
Դոցենտ	158	20
Ավագ դասախոս	29	-
Դասախոս	76	11
Ասիստենտ	32	4
Վարչական աշխատողներ	248	-
<b>Ընդամենը</b>	<b>561</b>	<b>38</b>

### Համարեղությամբ և ժամավճարով աշխատողներ

Պաշտոնը/կոչումը	Համարեղություն	Ժամավճարային կարգով
Պրոֆեսոր	2	4
Դոցենտ	16	11
Ավագ դասախոս	13	1
Դասախոս	41	29
Ասիստենտ	8	20
Վարչական աշխատողներ	3	-
<b>Ընդամենը</b>	<b>83</b>	<b>65</b>

### Գյումրու մասնաճյուղ

Պաշտոնը/կոչումը	Հիմնական	Համարեղությամբ	Ժամավճարային կարգով
Պրոֆեսոր	2	1	2
Դոցենտ	8	5	4
Ավագ դասախոս	2	9	13
Դասախոս	7	9	22
Ասիստենտ	2	-	-
Վարչական աշխատողներ	30	1	-
<b>Ընդամենը</b>	<b>51</b>	<b>25</b>	<b>41</b>


### Եղեգնածորի մասնաճյուղ

Պաշտոնը/կոչումը	Հիմնական	Համարեղությամբ	Ժամավճարային կարգով
Դոցենտ	1	3	-
Դասախոս	4	2	-
Ասիստենտ	1	3	2
Վարչական աշխատողներ	6	-	-
<b>Ընդամենը</b>	<b>12</b>	<b>8</b>	<b>2</b>

### Ֆինանսարենտագիտական քոլեջ

Պաշտոնը/կոչումը	Հիմնական	Համարեղությամբ	Ժամավճարային կարգով
Դասախոս	44	11	19
Ուսուցիչ	5	-	3
Արտադրական ուսուցման վարպետ	9	-	-
Վարչական աշխատողներ	30	-	-
<b>Ընդամենը</b>	<b>88</b>	<b>11</b>	<b>22</b>

**ՀՊՏՀ հիմնական, համարեղությամբ և ժամավճարային կարգով աշխատող ակադեմիական կազմի բաշխումը, 2022 թ.**



■ Հիմնական ■ Համատեղություն ■ Ժամավճար

**Սովորողների կազմը**

**Առկա ուսուցում**

**Բակալավրիատ**

Ֆակուլտետ/մասնագիտություն	1-ին կուրս		2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս		Ընդ.
	Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	
<b>Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ</b>									
Վիճակագրություն	8	26	7	10	8	21	0	0	<b>80</b>
Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	2	50	1	26	1	25	0	0	<b>105</b>
Տեղեկատվական համակարգեր	2	46	1	29	1	26	0	0	<b>105</b>
<b>Կառավարման ֆակուլտետ</b>									
Կառավարում /ըստ ոլորտի/	12	175	12	166	11	154	14	174	<b>718</b>
Սերվիս	0	29	1	14	1	30	0	0	<b>75</b>
Զբոսաշրջություն	0	25	0	0	2	33	0	0	<b>60</b>
<b>Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ</b>									
Շուկայագիտություն (Մարքեթինգ) /ըստ ոլորտի/	7	149	13	111	8	74	5	78	<b>445</b>
<b>Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ</b>									
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	7	192	13	136	13	123	11	94	<b>589</b>
<b>Ֆինանսական ֆակուլտետ</b>									
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	13	181	12	173	12	173	14	177	<b>755</b>
<b>ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ</b>									
Տնտեսագիտություն	16	187	15	114	15	83	22	42	<b>494</b>
Բնապահպանություն և բնօգտագործում	0	2	2	8	1	14	0	0	<b>27</b>
<b>Ընդամենը</b>	<b>67</b>	<b>1062</b>	<b>77</b>	<b>787</b>	<b>73</b>	<b>756</b>	<b>66</b>	<b>565</b>	<b>3453</b>



## Մագիստրատուրա

Ֆակուլտետ/մասնագիտություն	1-ին կուրս		2-րդ կուրս		Ընդ.
	Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	
<b>Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ</b>					
Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում	2	4	3	9	18
Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	4	7	5	3	19
<b>Կառավարման ֆակուլտետ</b>					
Գործարար վարչարարություն	9	10	10	15	44
Հանրային կառավարում	5	8	3	9	25
Առողջապահության կառավարում և վարչարարություն	0	18	0	0	18
Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավ.	0	8	0	11	19
Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում	0	0	0	0	0
<b>Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ</b>					
Մարքեթինգային հաղորդակցություն	12	15	7	14	48
Նախագծերի կառավարում	0	14	1	12	27
Մարդկային ռեսուրսների կառավարում	3	17	3	19	42
<b>Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ</b>					
Հաշվապահական հաշվառում և հարկում	4	13	3	10	30
Աուդիտ	13	19	14	20	66
<b>Ֆինանսական ֆակուլտետ</b>					
Հանրային ֆինանսներ	3	2	3	5	13
Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում	5	5	5	4	19
Կորպորատիվ ֆինանսներ	7	3	6	3	19
Բանկային գործունեության կազմակերպում	9	15	9	20	53
<b>ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ</b>					
Միջազգային տնտեսական հարաբերություններ	7	4	7	12	30
Բնօգտագործման տնտեսագիտություն	0	5	1	3	9
Տնտեսագիտության տեսություն	5	1	3	9	18
Մաքսային վարչարարություն	3	11	1	15	30
Մակրոտնտեսական վերլուծություն	8	2	6	4	20
Տնտեսության պետական կարգավորում	0	0	0	1	1
Նորարարությունների տնտեսագիտություն	2	3	4	0	9
<b>Ընդամենը</b>	<b>101</b>	<b>184</b>	<b>94</b>	<b>198</b>	<b>577</b>

## Հեռակա ուսուցում

### Բակալավրիատ

Ֆակուլտետ/մասնագիտություն	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	4-րդ կուրս	5-րդ կուրս	Ընդ.
	<b>Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ</b>					
Վիճակագրություն	0	0	0	0	13	13
Տեղեկատվական համակարգեր	7	0	0	0	0	7
<b>Կառավարման ֆակուլտետ</b>						
Կառավարում /ըստ ոլորտի/	81	110	100	111	62	464
Սերվիս	13	15	0	0	0	28
<b>Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ</b>						
Շուկայագիտություն (Մարքեթինգ) /ըստ ոլորտի/	52	73	49	64	40	278
<b>Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ</b>						
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	42	84	67	91	91	375
<b>Ֆինանսական ֆակուլտետ</b>						
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	114	170	163	181	134	762
<b>ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ</b>						
Տնտեսագիտություն	44	56	42	36	33	211
<b>Ընդամենը</b>	<b>353</b>	<b>508</b>	<b>421</b>	<b>483</b>	<b>373</b>	<b>2138</b>

### Մագիստրատուրա

<i>Ֆակուլտետ/մասնագիտություն</i>	<i>1-ին կուրս</i>	<i>2-րդ կուրս</i>	<i>3-րդ կուրս</i>	<i>Ընդ.</i>
<b>Կառավարման ֆակուլտետ</b>				
Գործարար վարչարարություն	0	10	0	<b>10</b>
<b>Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ</b>				
Մարքեթինգային հաղորդակցություն	0	10	17	<b>27</b>
<b>Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ</b>				
Աուդիտ	19	11	0	<b>30</b>
<b>Ֆինանսական ֆակուլտետ</b>				
Հանրային ֆինանսներ	0	10	11	<b>21</b>
<b>ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ</b>				
Միջազգային տնտեսական հարաբերություններ	7	0	0	<b>7</b>
Մաքսային վարչարարություն	0	8	0	<b>8</b>
<b>Ընդամենը</b>	<b>26</b>	<b>49</b>	<b>28</b>	<b>103</b>


### Ասպիրանտուրա

<i>Մասնագիտություն</i>	<i>Առկա</i>	<i>Հեռակա</i>	<i>Հայցորդ</i>	<i>Ընդամենը</i>
<b>Ը.00.01. Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն</b>	<b>2</b>	<b>-</b>	<b>2</b>	<b>4</b>
<b>Ը.00.02. Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում</b>	<b>16</b>	<b>7</b>	<b>16</b>	<b>39</b>
- Կառավարում	9	4	10	23
- Բիզնես վարչարարություն	2	1	1	4
- Բնօգտագործման տնտեսագիտություն	1	-	-	1
- Մակրոէկոնոմիկա	3	1	1	5
- Միկրոէկոնոմիկա և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում	1	-	4	5
- Մարքեթինգ	-	1	-	1
<b>Ը.00.03. Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում</b>	<b>12</b>	<b>4</b>	<b>14</b>	<b>30</b>
- Ֆինանսներ	2	2	3	7
- Բանկային գործ և ապահովագրություն	3	-	3	6
- Կառավարչական հաշվառում և աուդիտ	3	-	4	7
- Ֆինանսական հաշվառում	2	2	4	8
- Վիճակագրություն	2	-	-	2
<b>Ը.00.06. Միջազգային տնտեսական հարաբերություններ</b>	<b>5</b>	<b>2</b>	<b>9</b>	<b>16</b>
<b>Ը.00.08. Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում</b>	<b>5</b>	<b>-</b>	<b>4</b>	<b>9</b>
- Տնտեսամաթեմատիկական մեթոդներ	5	-	3	8
- Տնտեսական ինֆորմատիկա և տեղեկատվական համակարգեր	-	-	1	1
<b>Ընդամենը</b>	<b>40</b>	<b>13</b>	<b>45</b>	<b>98</b>

**2022 թ. դրությամբ համալսարանի բոլոր կրթական ծրագրերով ուսանողների թիվը 8200 է, այդ թվում՝**

- առկա ուսուցման բակալավրիատ՝ 3453
- հեռակա ուսուցման բակալավրիատ՝ 2138
- առկա ուսուցման մագիստրատուրա՝ 577
- հեռակա ուսուցման մագիստրատուրա՝ 103
- հետբուհական կրթություն՝ 98
- ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ՝ 478
- ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ՝ 177
- ՀՊՏՀ քոլեջ՝ 1176

**ՀՊՏՀ սովորողների շարժընթացը 2018-2022 թթ.**




**2022-2023 ուսումնական տարում ՀՊՏՀ (այդ թվում՝ մասնաճյուղ և քոլեջ) ընդունված ուսանողների թիվը**


Ֆակուլտետ/մասնագիտություն	Բակալավրիատ		Մագիստրատուրա		Ասպիրանտուրա	
	Առկա	Հեռ.	Առկա	Հեռ.	Առկա	Հայցորդ
<b>Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակ.</b>						
Վիճակագրություն	37	-	-	-	2	-
Ալտուարական և ֆինանսական մաթեմատիկա	50	-	-	-	-	-
Տեղեկատվական համակարգեր	50	7	-	-	-	-
Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում	-	-	6	-	-	-
Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտ.	-	-	11	-	-	-
<b>Կառավարման ֆակուլտետ</b>						
Կառավարում (ըստ ոլորտի)	204	75	-	-	2	1
Սերվիս	27	14	-	-	-	-
Զբոսաշրջություն	30	-	-	-	-	-
Գործարար վարչարարություն	-	-	19	-	1	-
Հանրային կառավարում	-	-	13	-	-	-
Մարդկային ռեսուրսների կառավարում	-	-	20	-	-	-
Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում	-	-	8	-	-	-
Առողջապահության կառավարում և վարչարարութ.	-	-	18	-	-	-
Միկրոէկոնոմիկա	-	-	-	-	-	3
<b>Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակ.</b>						
Շուկայագիտություն (Մարքեթինգ) /ըստ ոլորտի/	158	52	29	-	-	-
Նախագծերի կառավարում	-	-	4	-	-	-
<b>Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակ.</b>						
Հաշվապահական հաշվառում և հարկում	203	37	19	0	1	2
Աուդիտ	-	-	31	19	-	4
<b>Ֆինանսական ֆակուլտետ</b>						
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	204	109	-	-	-	2
Հանրային ֆինանսներ	-	-	5	-	-	-
Արժեթղթերի շուկայի վերլ. և կառավ.	-	-	10	-	-	-
Կորպորատիվ ֆինանսներ	-	-	10	-	-	-
Բանկային գործունեության կազմակերպում	-	-	24	-	-	2
<b>ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ</b>						
Տնտեսագիտություն	206	44	-	-	-	-
Բնապահպանություն և բնօգտագործում	1	-	-	-	-	-
Տնտեսագիտության տեսություն	-	-	6	-	1	1
Միջազգային տնտեսական հարաբերություններ	-	-	10	8	1	1
Մաքսային վարչարարություն	-	-	14	0	-	-

Մակրոտնտեսական վերլուծություն	-	-	10	0	-	-
Մակրոէկոնոմիկա	-	-	-	-	1	-
Բնօգտագործման տնտեսագիտություն	-	-	5	-	-	-
Նորարարությունների տնտեսագիտություն	-	-	5	-	-	-
Սկիզբառայ կամ օտարերկրյա դիմորդներ	21	14	1	1	-	-
Քոլեջից- բուհ ընդունվածներ (2-րդ կուրս)	-	118	-	-	-	-
<b>Ընդամենը՝ ՀՊՏՀ</b>	<b>1191</b>	<b>470</b>	<b>278</b>	<b>28</b>	<b>9</b>	<b>16</b>
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ	121	27	14	-	-	-
ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջ	411	-	-	-	-	-
<b>Ընդամենը</b>	<b>1723</b>	<b>497</b>	<b>292</b>	<b>28</b>	<b>9</b>	<b>16</b>


**2022-2023 ուսումնական տարում ՀՊՏՀ (այդ ովում ՀՊՏՀ ԳՄ) ընդունված ուսանողների թիվը (ընդամենը՝ 2565)**



**2018-2022թթ. ՀՊՏՀ բակալավրիատ ընդունված ուսանողների թվի շարժընթացը**




**ՀՊՏՀ ուսանողների ընդունելության տվյալներն ըստ առանձին կրթաձևերի (2018-2022 թթ.)**



**2021-2022 ուսումնական տարվա և նախորդ տարիների ՀՊՏՀ շրջանավարտների  
(երկտարեցիների) թիվը**

<b>Ֆակուլտետ/մասնագիտություն</b>	<b>Բակալավրիատ</b>		<b>Մագիստրատուրա</b>	
	<i>Առկա</i>	<i>Հեռ.</i>	<i>Առկա</i>	<i>Հեռ.</i>
<b>Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ</b>				
Վիճակագրություն	26	0	0	0
Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում	0	0	28	0
Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	0	0	17	0
<b>Կառավարման ֆակուլտետ</b>				
Կառավարում /ըստ ոլորտի/	86	69	0	0
Գործարար վարչարարություն (կառավարում)	0	0	41	17
Հանրային կառավարում	0	0	15	0
Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում	0	0	6	0
Առողջապահության կառավարում և վարչարարություն	0	0	16	0
Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում	0	0	12	9
Նախորդ տարիների շրջանավարտներ (երկտարեցի)	4	1	0	2
<b>Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ</b>				
Շուկայագիտություն (մարքեթինգ) /ըստ ոլորտի/	47	49	0	0
Մարքեթինգային հաղորդակցություններ	0	0	33	27
Բիզնեսի կազմակերպում	0	0	8	10
Նախագծերի կառավարում	0	0	7	0
Մարդկային ռեսուրսների կառավարում	0	0	20	0
Նախորդ տարիների շրջանավարտներ (երկտարեցի)	0	0	0	2
<b>Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ</b>				
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	78	82	0	0
Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)	0	0	17	22
Աուդիտ	0	0	29	18
Նախորդ տարիների շրջանավարտներ (երկտարեցի)	1	2	0	0
<b>Ֆինանսական ֆակուլտետ</b>				
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	139	131	0	0
Հանրային ֆինանսներ	0	0	7	21
Կորպորատիվ ֆինանսներ	0	0	11	0
Բանկային գործունեության կազմակերպում	0	0	57	35
Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում	0	0	9	0
Նախորդ տարիների շրջանավարտներ (երկտարեցի)	1	1	0	1
<b>ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ</b>				
Տնտեսագիտություն	43	35	0	0
Տնտեսագիտության տեսություն	0	0	14	
Միջազգային տնտեսական հարաբերություններ	0	0	12	6
Մաքսային վարչարարություն	0	0	23	0
Մակրոտնտեսական վերլուծություն	0	0	13	0
Տնտեսության պետական կարգավորում	0	0	8	0
Բնօգտագործման տնտեսագիտություն	0	0	8	0
Նախորդ տարիների շրջանավարտներ (երկտարեցի)	0	1	0	0
<b>Ընդամենը</b>	<b>425</b>	<b>371</b>	<b>411</b>	<b>170</b>



**2021-2022 ուսումնական տարվա քննաշրջանների արդյունքները**

**Առկա ուսուցում**

**Բակալավրիատ**

Ֆակուլտետ/մասնագիտություն	Առաջադիմություն (%)	40-70% ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	70,01-85% ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	85,01-89,99% ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	90% և ավելի ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)
<b>Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ</b>					
Վիճակագրություն	84.11	28	20	14	18
Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	78.3	33	17	5	2
Տեղեկատվական համակարգեր	78.6	31	17	4	6
<b>Կառավարման ֆակուլտետ</b>					
Կառավարում /ըստ ոլորտի/	77.6	311	162	50	114
Սերվիս	61.1	25	15	4	5
Զբոսաշրջություն	80.6	14	10	3	8
<b>Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ</b>					
Շուկայագիտություն (Մարքեթինգ) /ըստ ոլորտի/	88.4	152	86	30	66
<b>Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ</b>					
Հաշվապահական հաշվառում և հարկում	76.1	268	47	9	31
<b>Ֆինանսական ֆակուլտետ</b>					
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	75.7	122	164	54	109
<b>ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ</b>					
Տնտեսագիտություն	71.3	166	80	28	54
Բնապահպանություն և բնօգտագործում	78	11	7	-	7
<b>Ընդամենը</b>	<b>78.3</b>	<b>1161</b>	<b>625</b>	<b>201</b>	<b>420</b>

**Մագիստրատուրա**

<b>Ֆակուլտետ/մասնագիտություն</b>	<b>Առաջադիմություն (%)</b>	<b>40-70% ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)</b>	<b>70,01-85% ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)</b>	<b>85,01-89,99% ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)</b>	<b>90% և ավել ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)</b>
<b>Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ</b>					
Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում	73.8	8	7	6	19
Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	100	4	3	4	14
<b>Կառավարման ֆակուլտետ</b>					
Գործարար վարչարարություն	82.2	19	15	2	30
Հանրային կառավարում	70.8	8	4	0	15
Առողջապահության կառավարում և վարչարարություն	77.5	2	4	4	6
Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում	-	0	5	2	5
Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում	63.6	4	1	0	9
<b>Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ</b>					
Մարքեթինգային հաղորդակցություն	95.4	3	0	1	17
Մարդկային ռեսուրսների կառավարում	95.4	4	6	2	10
Նախագծերի կառավարում	100	0	2	4	7
<b>Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ</b>					
Հաշվապահական հաշվառում և հարկում	77.3	6	-	-	5
Աուդիտ	93.6	14	2	4	14
<b>Ֆինանսական ֆակուլտետ</b>					
Հանրային ֆինանսներ	75	1	2	0	3
Կորպորատիվ ֆինանսներ	85.7	0	1	1	4
Բանկային գործունեության կազմակերպում	87	3	5	3	15
Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում	78	0	0	1	6
<b>ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ</b>					
Տնտեսագիտության տեսություն	75	6	2		4
Միջազգային տնտեսական հարաբերություններ	50	9	1	2	7
Մակրոտնտեսական վերլուծություն	90	1	2	1	6
Բնօգտագործման տնտեսագիտություն	25	3	0	0	1
Մաքսային վարչարարություն	65.6	9	2		5
Նորարարությունների տնտեսագիտություն	100				4
<b>Ընդամենը</b>	<b>84.2</b>	<b>104</b>	<b>64</b>	<b>37</b>	<b>205</b>

## Հեռակա ուսուցում

### Բակալավրիա

Ֆակուլտետ/մասնագիտություն	Առաջադիմություն (%)	40-70% ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	70,01-85% ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	85,01-89,99% ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	90% և ավելի ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)
<b>Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ</b>					
Վիճակագրություն	65.3	12	1	0	0
<b>Կառավարման ֆակուլտետ</b>					
Կառավարում /ըստ ոլորտի/	45.8	335	64	9	21
Սերվիս	36.4	8	1	2	0
<b>Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ</b>					
Շուկայագիտություն (Մարքեթինգ) /ըստ ոլորտի/	59.6	163	45	14	16
<b>Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ</b>					
Հաշվապահական հաշվառում և հարկում	57.1	154	17	4	26
<b>Ֆինանսական ֆակուլտետ</b>					
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	63.5	185	123	22	47
<b>ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ</b>					
Տնտեսագիտություն	33.1	133	3	2	2
<b>Ընդամենը</b>	<b>51.5</b>	<b>990</b>	<b>254</b>	<b>53</b>	<b>112</b>

### Մագիստրատուրա



Ֆակուլտետ/մասնագիտություն	Առաջադիմություն (%)	40-70% ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	70,01-85% ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	85,01-89,99% ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	90% և ավելի ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)
<b>Կառավարման ֆակուլտետ</b>					
Գործարար վարչարարություն	72.7	19	7	1	1
Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում	88.9	1	4	0	4
<b>Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ</b>					
Մարքեթինգային հաղորդակցություն	100	6	13	5	2
<b>Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ</b>					
Հաշվապահական հաշվառում և հարկում	72.7	6	-	1	9
Աուդիտ	91.9	14	1	-	4
<b>Ֆինանսական ֆակուլտետ</b>					
Հանրային ֆինանսներ	68.2	9	6	0	0
<b>ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ</b>					
Մաքսային վարչարարություն	18.8	7	-	-	1
<b>Ընդամենը</b>	<b>73.3</b>	<b>62</b>	<b>31</b>	<b>7</b>	<b>21</b>




### 2021-2022 ուսումնական տարում ուսանողների շարժը

Ֆակուլտետ/մասնագիտություն	Հեռացված	Ազատված	Ուսումնա. վերականգնած	Այլ բուհերից տեղափոխված	Ներքին շարժ	Բանակ գրավուցված
Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ	23	16	36	0	1	28
Կառավարման ֆակուլտետ	62	39	50	0	9	51
Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ	24	61	49	12	5	16
Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ	43	19	24	2	15	61
Ֆինանսական ֆակուլտետ	70	35	74	9	26	16
ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ	46	29	54	7	43	80
<b>Ընդամենը</b>	<b>268</b>	<b>199</b>	<b>287</b>	<b>30</b>	<b>99</b>	<b>252</b>


### Էլեկտրոնային կառավարման ցուցանիշներ



**Moodle.asue.am հարթակում 2022 թ. ձևավորված դասընթացների մոդուլների թիվն՝ ըստ կրթաձևերի և ակադեմիական խմբերի**



**Moodle հարթակում ձևավորված դասընթացների մոդուլների՝ ՀՊՏՀ սահմանած չափանիշներին համապատասխանության աստիճանը 2022 թ.՝ ըստ կրթաձևերի**



**2021-2022 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները**

**Առկա ուսուցում**

**Բակալավրիատ**

<b>Մասնագիտությունը</b>	<b>Գերազանց</b>	<b>Լավ</b>	<b>Բավարար</b>	<b>Անբավարար</b>
Վիճակագրություն	10	6	10	0
Կառավարում /ըստ ոլորտի/	25	26	35	5
Շուկայագիտություն (Մարքեթինգ) /ըստ ոլորտի/	19	14	14	0
Հաշվ. հաշվ.և հարկում /ըստ ոլորտի/	29	19	30	1
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	43	35	61	0
Տնտեսագիտություն	18	11	14	2
Բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի երկտարեցի ուսանողներ	0	1	5	-
<b>Ընդամենը</b>	<b>144</b>	<b>112</b>	<b>169</b>	<b>8</b>

**Մագիստրատուրա**

<b>Մասնագիտությունը</b>	<b>Գերազանց</b>	<b>Լավ</b>	<b>Բավարար</b>	<b>Անբավարար</b>
Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում	15	11	2	0
Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	10	3	4	0
Գործարար վարչարարություն (կառավարում)	20	12	9	0
Հանրային կառավարում	7	1	7	1
Առողջապահության կառավարում և վարչարարություն	3	4	9	0
Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում	4	2	0	0
Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում	6	6	0	1
